

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ Բացատրություն Սը ԵՍ

Անցեալ շաբուայ «Մասիսի» այս սիւնակներով, ինչպէս նաեւ մեր կայքէջերուն վրայ լոյս տեսաւ Սոցիալ Դեմոկրատ Զնչակեան Կուսակցութեան գորակցական յայտարարութիւնը՝ Զիլլըրի Քլինթոնի նախագահական թեկնածութեան կապակցութեամբ:

Ինչպէս որ կ'ակնկալէինք, այդ յայտարարութիւնը արժանացաւ բաւական մեծ հակազդեցութեան, աշխարհի տարբեր կողմերէն: Թէեւ համաձայն եղողները աւելի շատ էին, սակայն հակառակ արտայայտուողները աւելի խիստ էին իրենց քննադատութիւններուն մէջ:

Հակառակ եղողներու մօտ ամենէն աւելի շեշտուած կէտը կը վերաբերէր Զիլլըրի Քլինթոնի կեցուածքին՝ Հայկական Տեղասպանութեան հարցով: Քիչ չէին նաեւ անոնք, որոնք նախկին պետական քարտուղարը կը մեղադրէին Սուրիոյ հարցով:

Համաձայն ենք, որ Զիլլըր Քլինթոն Ծերակոյտի անդամ եղած ժամանակ ճանչցած էր Հայկական Տեղասպանութիւնը, իսկ պետական քարտուղարի պաշտօնը ստանձնելէ ետք, պաշտպանած էր այդ հարցով վարչակարգի կեցուածքը: Սակայն, որպէս Միացեալ Նահանգներու քաղաքացիներ չենք կրնար վերածուիլ մէկ հարցի վրայ հիմնուած քուէարկողներ: Այս երկրին մէջ կան բազմաթիւ ընկերային ու տնտեսական հարցեր, որոնք անմիջականօրէն առնչուած են մեր առօրեային հետ եւ այդ հարցերը եւս պէտք է նկատի առնուին:

Հանրապետականները կը նկատուին հարուստ դասակարգի շահերու պաշտպան կուսակցութիւն եւ կողմնակից՝ ընկերային նպաստներու եւ առողջապահական ծրագիրներու կրճատման ու նաեւ, որպէս գաղթականներու հակառակ եղող կազմակերպութիւն: Միւս կողմէ, Դեմոկրատները կը ներկայացան որպէս պարզ ժողովուրդի շահերու պաշտպան: Մենք ընտրութիւն կը կատարենք ոչ միայն թեկնածուներու՝ այլ նաեւ կուսակցութիւններու միջեւ:

Ինչ կը վերաբերի Սուրիոյ հարցին եւ Զիլլըրի Քլինթոնի ենթադրեալ դերակատարութեան, պէտք է յիշել, որ սկզբնական շրջանին ժողովուրդը նախ փորձեց խաղաղ ցոյցերու միջոցաւ իր արդար դժգոհութիւնը յայտնել երկրին մէջ տիրող կացութեան դէմ: Իշխանութիւններու անհանդուրժ ու խիստ վերաբերմունքը պատճառ դարձաւ, որ իրավիճակը ստանայ տարբեր բնոյթ, հասնելու համար այսօրուայ դժբախտ կացութեան:

Որպէս հաւաքականութիւն պէտք է գիտակցիցնք, որ կատարեալ թեկնածուներ չկան ու գորակցիցնք անոնք, որոնց հետ ունինք համաձայնութեան աւելի շատ եզրեր:

«ՄԱՍԻՍ»

Պաշտպանութեան Նախարարին Համաձայն Ատրպէյձան Լարուածութիւն Կը Ստեղծէ Սահմանային Գիծին Վրայ



ԵԱՀԿ ներկայացուցիչ ԱՆՃԷՅ Կասպրչիկ եւ Նախարար Վիգէն Սարգսեան հանդիպումի ընթացքին

Հայաստանի պաշտպանութեան նախարար Վիգէն Սարգսեան Նոյեմբեր 1-ին, Նախարարութեան վարչական համալիրէն ներս հանդիպու ունեցաւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անճէյ Կասպրչիկի հետ:

Հանդիպման ընթացքին ՀՀ պաշտպանութեան նախարարը ներկայացուց հայ-ատրպէյձանական գործերու շփման գիծին վրայ տիրող իրավիճակը, ընդգծելով, որ վերջին շաբաթներու ընթացքին Ատրպէյձան պարբերաբար լարուածութիւն կը ստեղծէ շփման գիծին վրայ: Նախարարը յայտնեց, որ կրակոցներու ե՛ւ քանակը եւ

կիրառուող զէնքերու տրամաշափը բարձրացած է:

Նաո Նախարար Սարգսեանի, այս սաղրանքներուն Հայաստանի զինուած ուժերը կը պատասխանեն միայն խիստ անհրաժեշտութեան պարագային՝ հաւատարիմ մնալով որդեգրած զսպման մարտավարութեան:

Դեսպան Կասպրչիկ իր հերթին նշեց, որ ԵԱՀԿ անձնական ներկայացուցիչ գրասենեակը շարունակական աշխատանքներ կ'իրականացնէ, շփման գիծին վրայ լարուածութեան նուազման նպատակով եւ յոյս յայտնեց, որ յառաջիկային կը յաջողուի առաջընթաց արձանագրել այս ուղղութեամբ:

Հայ Ամերիկեան Խորհուրդը Կը Զօրակցի Արտաշէս Քասախեանին եւ Քէթրին Պարկըրին



Արտաշէս Քասախեան

Յառաջիկայ Երեքշաբթի, Նոյեմբեր 8-ին Ամերիկայի Միացեալ Նահանգներու տարածքին տեղի ունենալիք ընտրութիւններուն առթիւ, Հայ Ամերիկեան Խորհուրդը (ՀԱԽ) հրապարակեց կազմակերպութեան գորակցութիւնը վայելող թեկնածուներու ցանկը (տեսնել էջ 20-ի վրայ):



Քէթրին Պարկըր

Առանձնացնելով Լոս Անճելըսի հայաշատ շրջաններուն մէջ տեղի ունենալիք երկու ընտրութիւններ, Հայ Ամերիկեան Խորհուրդը իր գորակցութիւնը կը յայտնէ Քալիֆորնիոյ Խորհրդարանի 43-րդ ընտրաշրջանի թեկնածուներու ցանկը:

Շար.ը էջ 5

Պելճիքայի Ծերակոյտի Ղեկավար՝ Հայոց Տեղասպանութեան Ժխտումը Պետք է Դիտարկել Որպէս Յանցագործութիւն

Հայոց ցեղասպանութեան փաստի ժխտումը պէտք է դիտարկել որպէս յանցագործութիւն: Այս մասին, Նոյեմբերի 1-ին, Հայաստանի Խորհրդարանէն ներս տեղի ունեցած ասուլիսի ընթացքին յայտարարեց Պելճիքայի Ծերակոյտի ղեկավար Քրիսթին Դեֆրան:

Այս առթիւ ան յիշեցուց, որ Պելճիքայի Խորհրդարանը առաջիններէն մէկն էր, եւրոպական Խորհրդարանական կառույցներու մէջ, որ 1998-ին ընդունեց Հայոց ցեղասպանութիւնը դատապարտող շատ խիստ բանաձեւ մը: «Մենք քայլեր առած ենք Հայոց ցեղասպանութեան եղելութեան ժխտման համար քրէական պատասխանատուութիւն սահմանելու ուղղութեամբ: Այն ժամանակ մենք չհասանք մեր նպատակին, բայց կը կարծեմ որ, մենք կը հասնինք մեր առջեւ դրուած նպատակի իրականացման», - յայտնեց Դեֆրան:

Ան պարզաբանեց, որ խօսքը այն մասին չէ, որ Խորհրդարանը պիտի թելադրէ պատմութիւնը: «Խօսքը այդ պատմութիւնը նոր սերունդներուն փոխանցելու ու սերունդներու միջոցով փոխանցումը շարունակական դարձնելու մասին է: Ոչ թէ մեղաւորին պատժելու, այլ նոր բանակցութիւններու ու խաղաղութեան հաստատման ճանապարհ հարթելու համար», - յայտարարեց Պելճիքայի Ծերակոյտի ղեկավարը:

Միշէլ Աուն Ընտրուեցաւ Լիբանանի Նախագահ

Աւելի քան երկու տարի նախագահի աթոռը թափուր մնալէ ետք, Լիբանանի Խորհրդարանը վերջապէս յաջողեցաւ ընտրել երկրի նոր նախագահ:

Հոկտեմբեր 31-ին, Խորհրդարանը ձայներու մեծամասնութեամբ Միշէլ Աունը ընտրեց երկրի 13-րդ նախագահը:

Միշէլ Աուն կը նկատուի Լիբանանի վերջին տասնամեակներու ամենէն խնդրաշարժ անձնաւորութիւններէն մէկը եւ Շիրիներու «Հըզպալլահ» զինեալ կազմակերպութեան դաշնակիցը:

Միշէլ Աուն կարողացաւ մեծամասնութիւն ապահովել, երբ Սունի համայնքի ղեկավար՝ Սատտ Հարիրի համաձայն եղաւ՝ անոր նախագահութեան՝ երկիրը ճգնաժամէն դուրս բերելու նպատակով:

Դեպի Անատամ Հայաստան

ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ

Ինչպես յայտնի է՝ լաւ ատամնաբույժը փորձու է բուժել հիւանդ ատամը, իսկ վատ ատամնաբույժը պարզապէս հեռացնում է այն: Բայց եթէ պարզուստ է, որ վատ ատամնաբույժի աւագ եղբայրն էլ իր հերթին ատամների պրոթեզավորմամբ է զբաղւում, դա արդէն զուտ մասնագիտական խնդիր չէ, դա ընտանեկան բիզնես է: Ընդ որում՝ յանցաւոր բիզնես, որովհետեւ եղբայրներն այդպիսով յաճախորդի առողջութեան հաշուին իրենց համար կայուն եկամուտներ են ապահովում:

Վարչապետ Կարէն Կարապետեանը լաւ «ատամնաբույժ» է, թէ ոչ՝ այս պահին դեռ դժուար է ասել: Կարծես թէ խալաթը տեղն է, գործիքները պլալլան են, ինքն էլ բազմաթիւ տերմիններ գիտի: Բայց առաջին կարծես թէ զբաղուած է միայն «ատամներ քաշելով», ընդ որում՝ զարմանալի գուգադիպութեամբ, բոլոր դէպքերում դրանից շահում է միայն «աւագ եղբոր բիզնեսը»: Ընդամենը երկու օրինակ բերենք:

Կապի եւ տրանսպորտի նորանշանակ նախարարը յայտարարեց, թէ իրենք դեռ պիտի ուսումնասիրեն՝ նպատակայարմա՞ր է Հիւսիս-հարաւ մայրուղու շինարարութիւնը շարունակելը, թէ ոչ: Այն, որ այդ շինարարութիւնը մեր տնտեսութեան «հիւանդ ատամներից» մէկն էր՝ հասկանալի է: Այն, որ այդ շինարարութեան վրայ ահուելի գումարներ են մտնում՝ նոյնպէս յայտնի է: Աւելին՝ Հայաստանն այդ ճանապարհի համար այնքան վարկ է վերցրել, որ յայտնի չէ անգամ՝ կը կարողանա՞նք դրա տակից դուրս գալ, թէ ոչ: Ընդ որում՝ այդքանով հանդերձ, մասնագործի միայն մի խօսքով՝ Հիւսիս-հարաւ տեղով մէկ կողուպցիոն ուսկ է: Բայց արդեօ՞ք դա նշանակում է, որ այդ ճանապարհը մեզ պէտք չէ: Իհարկէ պէտք է: Ատրպէյճանի ու թուրքիայի հետ սահմանը փակ է, իրանը Հայաստանի միջոցով վրաստանին կապող երկաթուղի էլ չունենք, այսինքն՝ հարցի միակ լուծումը նորմալ ճանապարհ ունե-

նալն է: Իսկ ահա Ռուսաստանի կարծիքով այդ ճանապարհը մեզ հեշ պէտք չէ՝ ճիշտ այնպէս, ինչպէս պէտք չէր Իրան-Հայաստան երկաթուղին: Ու ահա այս իրավիճակում Կարէն Կարապետեանի կառավարութիւնը երկու տարբերակ ունի: Կամ Հիւսիս-հարաւի շինարարութիւնը մաքրել կողուպցիայից (բուժել հիւանդ ատամը), ինչը ձեռնտու է Հայաստանին, կամ ընդհանրապէս փակել այդ պրոյեկտը (քաշել հիւանդ ատամը), ինչը ձեռնտու է Ռուսաստանին: Կարէն Կարապետեանը կարծես թէ հակուած է երկրորդ տարբերակին:

Յաջորդ օրինակը: Արդէն մօտ տարւտ տարի է, ինչ Հայաստանում ով չի աշխատում՝ որեւէ գետի վրայ փոքր ՀէԿ է կառուցում: Ընդ որում՝ կառուցում է բնապահպանական նորմերի կոպտագոյն խախտումներով, ինչի պատճառով գետեր են ցամաքում, ամբողջ գիւղեր են մնում առանց ջրի, կենդանական աշխարհն է ոչնչացւում եւ այլն: Բայց արդեօ՞ք սա նշանակում է, որ Հայաստանը պիտի հրաժարուի փոքր ՀէԿ-երից: Իհարկէ ոչ, որովհետեւ մենք էներգափոխանակման սեփական պաշարներ չունենք, գազից ստացուած էլեկտրա-

էներգիան էլ ահաւոր թանկ է եւ տնտեսութեան հերն անիծում է: Փոխարէնը՝ կայուն եւ երաշխաւորուած եկամուտներ է ապահովում գազ մատակարարող եւ այդ գազով էլեկտրաէներգիա արտադրող ընկերութիւնների համար (դրանք բոլորը ուսական են): Այս իրավիճակում նոյնպէս Կարէն Կարապետեանը ճիշտ նոյն ընտրութեան առջեւ է կանգնած՝ կամ փոքր ՀէԿ-երի ոլորտում կարգի հրաւիրել բոլորին (պահանջել, որ բնապահպանական նորմերը խստորեն պահպանուեն), կամ այնպէս անել, որ նոր ՀէԿ-եր չկառուցուեն, եղածների մի մասն էլ փակուի (կառավարութեան վերջին նիստում վարչապետը դա ձեւակերպեց որպէս «Չորագործման թոյլտուութիւնների սահմանափակում»): Կարծում ենք՝ չարժէ բացատրել, որ ինչքան քիչ էլեկտրաէներգիա արտադրուի ՀէԿ-երում, այնքան շատ գազ կը սպառեն ջերմակայանները, եւ կ'աւելանան ինչպէս դրանց, այնպէս էլ գազ մատակարարող ընկերութեան եկամուտները: Բնութիւնը, իհարկէ, դրանից կը շահի, բայց բնութիւնը կը շահէր նաեւ այն դէպքում, եթէ փոքր ՀէԿ-երի ոլորտը բուժուէր եւ ոչ թէ «հեռացուէր»՝ հիւանդ ատամի պէս:

Մի խօսքով՝ այնպէս է ստացուել, որ առ այսօր Կարէն Կարապետեանի նախաձեռնած բոլոր կոնկրետ քայլերը ծառայում են միայն մի նպատակի՝ մեծացնում են Հայաստանի տնտեսական կախուածութիւնը Ռուսաստանից: Հնարավոր է՝ պատահականութիւն է, հնարաւոր է՝ Կարէն Կարապետեանը միայն այդ հարցերում է պրոֆեսիոնալ, բայց ամէն դէպքում՝ մտահոգիչ է: Կարող էր, չէ՞, գոնէ ձեւի համար մի որոշում էլ «հակառակ ուղղութեամբ» ընդունել: Վերջին հաշուով՝ Հայաստանի եւ Ռուսաստանի տնտեսական շահերը 100 տոկոսով չէ, որ համընկնում են: **ԶՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ**

Տեսնեք, Թէ Ինչ Կը Լինի Այս Անգամ

ՀԱՅՎԱԶՆ ՂԱՅՐԻՅԵԱՆ

Քաղաքացիական պայմանագիր կուսակցութեան արտահերթ համաժողովում ելոյթ ունենալով, Հանրապետութիւն կուսակցութեան նախագահ Արամ Զ. Սարգսեանը յայտարարել է, որ Սահմանադրութիւնը փոխելով՝ իշխանութիւնը շարաւարտ սխալուել է, եւ նոր ընտրակարգով ստեղծուել է այնպիսի իրավիճակ, որ ընտրութիւններն ունենալու են միաժամանակ նախագահական ու խորհրդարանական բնույթով՝ լինելու է անգիջում պայքար:

Այդպիսով, ըստ նրա, փաստացի իշխանութեան հնարաւորութիւնները նուազում են, քանի որ նոր ընտրակարգով կուսակցութիւններն ու նրանց տեղական ստորաբաժանումները ստիպուած են լինելու պայքարել ամէն մի ձայնի համար:

Սահմանադրութիւնն ու նոր ընտրակարգն իսկապէս տալիս են այդ հնարաւորութիւնը: Դա յատկապէս նկատելի էր վանաձորի աւագանու ընտրութեանը: Միեւնոյն ժամանակ, այդ ընտրութեանն ի յայտ եկան նաեւ այլ մեխանիզմներ, որոնք իշխանութեան թեկ-

նածուին հնարաւորութիւն տուեցին վերցնել քաղաքացիական պաշտօնը: Ըստ ամենայնի, հենց այդ մեխանիզմներն է նաեւ կիրառուելու իշխանութիւնը համապետական ընտրութեան ժամանակ:

Այդ ընտրութիւնը ցոյց տուեց, որ նոր ընտրակարգի պայմաններում իշխանութիւնն այլեւս կարիք չունի «խփել» որքան պէտք է, եւ դա հնարաւորութիւն է տալիս ընտրութիւնն անցկացնել հնարաւորինս անաղմուկ, առանց մասշտաբային ընտրակեղծիքների, որոշակի քանակի իրական քուէների բազայի վրայ:

Հայաստանում ընտրութեան սահմանադրական մեխանիզմները վաղուց ոչնչացուած են, խեղուած է այդ միջոցառման հանրային եւ քաղաքական ընկալումը: Փոխարէնը, իշխող համակարգը տարիներ ընթացքում ստեղծել է մի մեխանիզմ, որն է վոլուպիայի ենթարկելով՝ հասցրել է այնպիսի մակարդակի, երբ կարող է ստանալ իր ցանկացած արդիւնքը, միաժամանակ ապահովելով բաւական հանգիստ ու բարենպաստ ֆոն:

Արամ Զ. Սարգսեանի, ինչպէս նաեւ շատ այլ քաղաքական ուժերի

դիրքորոշումները հասկանալի են: Կուսակցութիւնները չեն կարող չմասնակցել ընտրութիւններին, այնպէս կորցնում են իրենց իմաստն ու նշանակութիւնը: Այդ պատճառով, ամէն ընտրութիւնից առաջ նրանք յայտարարում են, որ այս անգամ իրավիճակն այլ է, հնարաւորութիւնները մեծանում են, եւ այլն: Սա նաեւ բնորոշ է նորաստեղծ կուսակցութիւններին, որոնք փորձում են որոշակի առաջարկներ անել ընտրական մեխանիզմով յաջողութեան հասնելու համար:

Իշխանութիւնն, իր հերթին, ամէն անգամ ստեղծում է որոշակի պայմաններ, որպէսզի կուսակցութիւնները կարողանան հիմնաւորել իրենց մասնակցութիւնը «նոր ստեղծուած հնարաւորութիւններով», որպէսզի մասնակցեն իշխանութեան ծրագրերի փաստացի լեգիտիմացման գործընթացին:

Սովորաբար, միշտ ստացուել է այն պատկերը, որը պէտք է իշխանութեանը, այս կամ այն կոնֆիդուրացիայով: Սակայն կարելորդ դա չէ, այլ այն, որ այս անգամ...

Տեսնենք, թէ ինչ կը լինի այս անգամ: **«ԼՐԱԳԻՐ»**

Ամէն Ինչ Եղաւ «Հոկտեմբեր 27»-ի Ոճրագործութիւնը Կոծկելու Համար

Ամէն ինչ եղաւ «Հոկտեմբեր 27»-ի ոճրագործութիւնը կոծկելու համար: Այս մասին, 27 Հոկտեմբերին, ԱԺ-ի այգիին մէջ «Հոկտեմբեր 27-ի» ողբերգութեան 17-րդ տարեկիցի արարողութեան ժամանակ լրագրողներու հետ զրոյցի ընթացքին նշեց ՀԱԿ խմբակցութեան պատգամաւոր Ստեփան Տէմիրճեանը:

«Այո, կարող ենք արձանագրել, որ ցանկութիւն չի եղել բացառապէս իր: Դա առաջին հերթին վերաբերում է այն իշխանութիւններին, որոնք ժամանակ տեղի ունեցաւ ոճրագործութիւնը», - ըստ ան: Ան կարծիք յայտնեց, որ եթէ չ'ըլլար «Հոկտեմբեր 27-ը», մենք

միանգամայն ուրիշ երկրի մէջ կ'ապրէինք. «Հոկտեմբեր 27-ի բացասական հետեւանքներն առ այսօր իրենց զգացնել են տալիս եւ յաղթահարուած չեն»:

Ստեփան Տէմիրճեանը չի բացառեր, որ դուրսի ուժերը ներգրաւուած էին ոճրագործութեան իրագործման մէջ. «Բայց ամէն դէպքում այդ ոճրագործութիւնը կատարուել է ներսի ստահակների միջոցով»:

Յիշեցնենք, որ 17 տարի առաջ՝ 27 Հոկտեմբերին, ոճրագործներու խումբը՝ Նայիրի Յունանեանի գլխավորութեամբ, ներխուժեցին Հայաստանի Ազգային ժողովի նիստերու դահլիճը եւ դիմահար կրա-

կոցներով սպանեցին կառավարութեան եւ խորհրդարանի անդամներուն:

Ահաբեկչութեան գոհ դարձան երկրի վարչապետ, Սպարապետ Վազգէն Սարգսեանը, խորհրդարանի նախագահ Կարէն Տէմիրճեանը, ԱԺ փոխնախագահներ Եուրի Բախչեանն ու Ռուբէն Միրոյեանը, արդիւնազործող հարցերու նախարար Լէոնարտ Պետրոսեանը, խորհրդարանի պատգամաւորներ Արմենակ Արմենակեանը, Հենրիկ Աբրահամեանը եւ Միքայէլ Քոթանեանը:

www.massispost.com



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐՈՒ
 ԱՌՅԻՎԱԼ ՂԵՄՈՎՈՐԱՏ ԶՆՉԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
 ՎԱՐԵ ԱՍՏՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
 Please Send Address Change To **MASSIS WEEKLY**

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կառավարութիւնը Գալիք Տարում Ծրագրում Է 3.2 Տոկոս Տնտեսական Աճ

Վարչապետ Կարէն Կարապետեանի խօսքով՝ այդ ցուցանիշն ապահովելու համար մեծ ջանքեր կը պահանջուեն:

«2017 թուականի համար կառավարութիւնը նպատակադրել է ՀՆԱ-ի շուրջ 3.2 տոկոս աճի մակարդակ: Հաշուի առնելով ստեղծուած տնտեսական միջավայրը, ինչպէս նաեւ ընտրական տարում սպասուող տնտեսական պասսիւլութիւնը՝ նշուած ցուցանիշին հասնելը մեզ նից բաւականին ջանքեր կը պահանջուի եւ մենք վստահեցնում ենք, որ կ'անենք ամէն ինչ՝ այդ ցուցանիշն ապահովելու համար»:

2017 թուականի պետական բիւջէի նախագիծը Ազգային ժողովի յանձնաժողովներին ներկայացնելիս ասաց վարչապետը:

Նա նշեց, որ վերջին տարիներին Հայաստանը պետական պարտքը

մեծացնելու հաշուին է կարողացել դիմագրաւել արտաքին տնտեսական ոչ-բարենպաստ իրավիճակին, Ռուսաստանի տնտեսութեան եւ պղնձի գների անկմամբ պայմանաւորուած ցնցումներին: Սակայն կան պետական պարտքի եւ դեֆիցիտի սահմանափակումներ, որոնք կառավարութիւնը ստիպուած է հաշուի առնել:

«2017 թուականին կառավարութիւնը իրականացնելու է բոլոր անհրաժեշտ քայլերը՝ աճի ապահովման նախադրեալ հանդիսացող մակրոտնտեսական կայունութեան ապահովման համար: Սակայն, քանի որ «Պետական պարտքի մասին» օրէնքով մենք գործում ենք սահմանափակումների ներքոյ, 2017 թուականի բիւջէն ներառելու է նուազող դեֆիցիտի միջոցով պարտքի կայունացման մօտեցումը», - ասաց Կարապետեանը:

Ծառուկեան.

«Պէտք է Խնդրեն, Որ Վերադառնամ

«Պէտք է խնդրեն, որ Ծառուկեանն այդ ծանրութեան տակ մտնի»: «Բարգաւաճ Հայաստան»-կուսակցութեան նախկին առաջնորդն այսպէս արձագանքեց քաղաքականութիւն իր վերադարձի հնարաւորութեան մասին լրագրողների հարցին՝ այդպէս էլ չյտակեցնելով, սակայն, թէ կոնկրետ ում խնդրանքին է սպասում:



«Բարգաւաճ Հայաստանի» նախկին առաջնորդ Գագիկ Ծառուկեան

«Ամէն մէկը պէտք է գիտակցելով, որպէս հայ... ոչ թէ անձնական շահի մասին մտածելով, այլ երկրի, ժողովրդի: Ծառուկեանը կայացած մարդ է, ունեւոր մարդ է, յարգարժան մարդ է աշխարհով մէկ, քաղաքականութեամբ չի ապրում, կարա ծանրութեան մէջ մտնի օգնելու, աջակցելու, որն ամէն օր անում է: Կարամ առանց քաղաքականութեան էլ դա անեմ, պէտք է խնդրեն, որ Ծառուկեանն էլ ծանրութեան տակ մտնի...», - յայտարարեց ԲՀԿ նախկին առաջնորդը:

Քաղաքականութիւն իր հնարաւոր վերադարձի մասին յայտարարութիւնից օրեր անց, մեծահարուստ գործարարն դարձեալ հանդիպեց Սերժ Սարգսեանին՝ իր կառուցած մարզական համալիրի հանդիսաւոր բացման արարողութեան ժամանակ:

Ծառուկեանին պատկանող կենտրոնի բացմանը մասնակցած Սերժ Սարգսեանն անցած տարուայ փետրուարեան աղմկայարոյց ելոյթ-թում, յիշեցնենք, գնահատելով

ԲՀԿ նախկին առաջնորդի տնտեսական գործունէութիւնը, մասնաւորապէս, յայտարարել էր՝ «տարիներ ի վեր շարունակում են օգուտ կախուած մնալ չստուգուած լուրերը՝ չմոծուած մի լիարդաւոր դրամի հարկերի մասին»:

Այդուհանդերձ, Գագիկ Ծառուկեանի կուսակիցները վստահ են, որ վերադարձի դէպքում նա կը մնայ ընդդիմադիր դաշտում: Այսպիսի համոզումն է «Ազատութեան» հետ գրոյցում յայտնեց «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան առաջնորդ Նաիրա Չոհրաբեանը՝ պնդելով, թէ Սերժ Սարգսեանի հետ անցած տարուայ ֆետրուարին յայտնի առձակատումից յետոյ երկրում միջոցառում չի փոխուել:

ՄԻԵԴ-Ի ԱՆՆԱԽԱՂԷՎ ՎՃԻՈՂ Հայաստանի Հանրապետութեան Դեմ

Մարդու իրաւունքներու եւ րոպական դատարանը (ՄԻԵԴ) Երեւանի Բիւզանդի փողոցի բնակիչներու գործով վճիռ կայացուցած է Հայաստանի Հանրապետութեան դէմ, որ փաստաբաններ Գէորգ Գոգալեանն ու Երուանդ Վարդանեանը աննախադէպ կը համարեն:

«Յաւօք սրտի, երեւի Եւրոպական Դատարանն իր ամբողջ պատմութեան ընթացքում գնահատում է մի երկրի բարձրագոյն դատական ատենի բարձրաստիճան ներկայացուցչի, ղեկավարի վարչագիծը՝ Արմաւրեկ դատարանի նախագահ Վրժան Մկրտումեանի վարչագիծը», - «Ազատութեան» հետ գրոյցին ըսաւ Եր-

ուանդ Վարդանեանը: Դիմումատուները՝ Եւրոպական դատարանը, Արտաշէս Վարդանեանն ու Եւրժանիկ Նանուշեանն են, որոնք տարիներ առաջ ստիպուած եղած են «գերակայ հանրային շահ» ճանչցուած տարածքը ազատել:

Անոնց հաւաստմամբ, իրենց տան իրական արժէքը 276 միլիոն դրամ է, մինչդեռ ընտանիքին փոխհատուցել են ընդամէնը 54 միլիոն դրամ:

ՄԻԵԴ-ի որոշման մէջ կ'ըսուի, որ Հայաստանի վճռաբեկ դատարանի նախագահ Արման Մկրտումեանը առարկայական դիրքորոշում չէ ցուցաբերած՝ այդպիսով խախտելով մարդու արդար դատաքննութեան իրաւունքը:

Զարուհի Փոստանջեան.

«Հայաստանի Հանրապետութիւնում Աւտորիտար Համակարգը Չի Փոխուում»

«Քաղաքական տեսանկիւնից անցնող շաբաթուայ կարեւոր իրադարձութիւններից էր, այսպէս կոչուած, նոր կառավարութեան ծրագրի քննարկումն ու ընդունումը եւ նոր վարչապետի մամուլի ասուլիսն ընտրուած լրագրողների հետ անցկացնելը: Այս իրադարձութիւնները մատնանշում են, որ Հայաստանի Հանրապետութիւնում աւտորիտար համակարգը չի փոխուում, շարունակում է մնալ, ուղղակի փորձ է արւում մեղմել այն ատելութիւնը, որ ունի հանրութիւնը դէպի աւտորիտար համակարգը», - ԱԺ բրիֆինգների ժամանակ յայտարարեց «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Զարուհի Փոստանջեանը:

Այլապէս, ըստ նրա, կառավարութեան ծրագրում կը ներառուէին դրոյթներ գաղտնագրած մասին, քանի որ խորհրդային ՊԱԿ-ը շարունակում է գործել ՀՀ-ում եւ, հետեւաբար, մենք անկախ քաղաքականութիւն վարելու հնարաւորութիւն դեռ չունենք:

Զ.Փոստանջեանի խօսքով՝ ծրագիրը պէտք է ունենար դրոյթներ Ընտրական օրէնագրի ազգայնացման մասին. «Սա ազգային օրէնադրութիւն չէ, միայն ժողովրդի մի մասին ներգրաւելու օրէնադրութիւն է եւ դրանով մենք չենք կարող լիարժէք իրականացնել



«Ժառանգութիւն» պատգամաւոր Զարուհի Փոստանջեան

ընտրութիւններ»: Նա նշեց, որ ԸՕ-ն իր մէջ չի ներառում ընտրատեղամասեր Հայաստանից դուրս, հայաշատ վայրերում, այնտեղից չի թոյլատրում պատգամաւորներ ունենալ հայոց խորհրդարանում:

Զ. Փոստանջեանը նշեց, որ կառավարութեան ծրագրում ազգային անվտանգութեան նոր հայեցակարգի ընդունում չկայ ծրագրում, մինչդեռ ՀՀ-ն պէտք է ունենայ ռազմական փոխօգնութեան պայմանագիր Արցախի հետ, մէկ իրաւական եւ դրամական միաւորի տարածք պէտք է ունենաք, նաեւ բանակցելու խնդիր պէտք է դրուած լինէր ծրագրում, որ չկայ:

«Սերժ Սարգսեանը Զգացնել է Տալիս, Որ Չի Պատրաստուում Հրաժեշտ Տալ Իշխանութեանը»

Հայ Ազգային Կոնգրէս (ՀԱԿ) խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանի խօսքով՝ Սերժ Սարգսեանը զգացնել է տալիս իր թիմին, որ չի պատրաստուում հրաժեշտ տալ իշխանութեանը:

Նախագահ Սերժ Սարգսեանը, յիշեցնենք, Հայաստանի վերաբերեալ Al Jazeera հեռուստաընկերութեան ֆիլմում ասում է, որ դեռ վաղ է խօսել վարչապետի պաշտօնում իր առաջադրման մասին, յաւելելով՝ նման տարբերակ դիտարկելու համար անհրաժեշտ է, որպէսզի Հանրապետական կուսակցութիւնն առաջիկայ ընտրութիւններում «չատ լաւքուէ ստանայ»: Սերժ Սարգսեանը, փաստօրէն, չի բացառում, որ առաջիկայ խորհրդարանական ընտրութիւններից յետոյ կարող է զբաղեցնել վարչապետի պաշտօնը:

«Կարելի էր շնորհակալութիւն յայտնել ընդդիմութեան անունից Սերժ Սարգսեանին այս նուէրի համար, որովհետեւ ինքը, փաստօրէն, զգացնել է տալիս երեւի իր թիմին, որ այնուամենայնիւ ինքը չի պատրաստուում հրաժեշտ տալ իշխանութեանը, եւ [վարչապետ] Կարէն Կարապետեանն ընդամէնը ժամանակաւոր մի երեւոյթ է, որի նպատակն է՝ մեղմացնել սոցիալական դժգոհութիւնը Հայաստանում ընտրութիւններից առաջ, ապահովել Հանրապետական կուսակցութեան յաղթանակն ընտրութիւններում, որից յետոյ Սերժ Սարգսեանն արդէն կը մտածի վարչապետի պաշտօնը ստանձնելու մասին 2018 թուականից սկսած», - «Կիրակնօրեայ վերլուծական Հրապարակման» հետոյ կարող ման ժամանակ ասաց Զուրաբեանը:

ՔՊ-Ը Պատրաստ է Այլ Ուժերի Հետ Քննարկել Մէկ Կուսակցութիւն Դառնալու Հարցը

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան արտահերթ համաժողովի ժամանակ ընտրուեց վարչութեան նոր կազմ: Կուսակցութեան վարչութեան նախագահի պաշտօնում Արայիկ Յարութիւնեանին փոխարինեց «Սասուն» ջոկատի հրամանատար, Հրազդանի նախկին քաղաքապետ Սասուն Միքայէլեանը:

Թէեւ Նիկոլ Փաշինեանը նախորդ վարչութեան աշխատանքը ձախողուած չհամարեց, սակայն արտահերթ համաժողովին պարզաբանեց. - «Սրանով մենք հանրութեանը տալիս ենք ուղիղ ուղեճ, որ մենք կուսակցութիւն ենք, որ Հայաստանի քաղաքացիներին խոստացել է, որ իրենից կախուած ամէն ինչ անելու է Հայաստանում օրինական, չկոռումպագուած, ոչ թալանչի իշ-

խանութիւն հաստատելու համար, եւ մենք արել ենք սա ցոյց տալու, որ յանուն էր խնդրի մեզ պէտք է նոր կոնսոլիդացիա»:

Վարչութեան գլխաւոր անելիքներից է գտնել կուսակցութիւններ ու քաղաքական ուժեր, որոնց հետ հնարաւոր կը լինի միաւորուել ու մէկ կուսակցութիւն ստեղծել:

«Մենք հատեղ չունենք որեւէ նախապայման՝ ոչ անձնային, ոչ իրաւաբանական, ոչ անուան, ոչ ազգանունան: Մենք պատրաստ ենք հնարաւոր գաղափարական, գաղափարային մօտիկ ուժերի հետ քննարկել մէկ կուսակցութիւն դառնալու հեռանկարը: Մեր ամբիջիտները վերանախապն են, վերաբերուում են, վերականգնական են», - յայտարարեց ԱԺ պատգամաւոր Նիկոլ Փաշինեանը:

ԼՈՒՐԵՐ

Հայաստանի Սեջ Յատկօրէն Նուագած Է Ռուսաստանի Վարկանիշը՝ Որպէս Բարեկամ Երկիր

Հայաստանցիներու շրջանակին մէջ յատկօրէն՝ 17 կէտով նուագած է Ռուսաստանի վարկանիշը, որպէս բարեկամ երկիր: Այս մասին կը վկայէ Ջարգացման Եւրասիական Դրամատան ամբողջարկութեան հետագօտուծիւններու կեդրոնը:



Կեդրոնի փորձագէտները կը վկայեն, որ անցեալ տարիներուն Հայաստանի մէջ, այս չափանիշը ամենաբարձրն էր ԱՊՀ միւս երկիրներու համեմատ՝ 2015-ին՝ 86 տոկոս կը կազմէր, իսկ 2014-ին՝ Ռուսաստանը՝ որպէս բարեկամական երկիր կ'ընկալէր հարցուած հայաստանցիներու շուրջ 87 տոկոսը:

Կեդրոնի հրապարակած փաստաթուղթին մէջ Հայաստանի ռազմավարական դաշնակցի եւ անվտանգութեան երաշխաւոր համարուող երկրի վարկանիշի անկումը՝ փորձագէտները կը բացատրեն երկու հանգամանքով: Առաջինը՝ հայաստանցիներուն չէր գոհացուցած ապրիլեան քառօրեայ պատերազմի ժամանակ Ռուսաստանի դիրքորոշումը, իսկ երկրորդ պատճառը՝ էլեկտրականութեան սակագնի բարձրացումը, որ հայաստանցիները կրկին կը կապէին հայաստանեան շուկային մէջ կենսաուժակիրներու մատակարարման գերիշխող դիրք ունեցող Ռուսաստանի հետ:

«Ռեզիլիենտ» հետազօտական կեդրոնի ղեկավար Լաուրա Պաղտասարեան կ'ըսէ, որ չէ կրցած հասկնալ, թէ երբ եղած է այս հարցումը, քանի որ անոր կարծիքով 21 Սեպտեմբերին Հանրապետութեան հրապարակին մէջ «Իս-

կանդերներու» երթէն յետոյ Ռուսաստանի նկատմամբ վերաբերմունքը ամենայն հաւանականութեամբ բարելաւուեցաւ:

Ջարգացման Եւրասիական Դրամատան ամբողջարկութեան հետագօտուծիւններու կեդրոնի հարցման արդիւնքներուն համաձայն, յետխորհրդային երկիրներէն ամենաբարձր վարկանիշը Ռուսաստանը ունի՝ Ղրղզիստանի, Տաջիկիստանի, Պելաուսի եւ Ղազախիստանի մէջ. 89-էն մինչեւ 81 տոկոս:

Ռուսերը նոյն Տաջիկիստանը կամ Ղրղզիստանը այնքան ալ բարեկամական երկիրներ չեն համարէր, մինչդեռ Հայաստանը բարեկամ երկիրներու ցանկին մէջ 35 տոկոսով զբաղեցուցած է չորրորդ հորիզոնականը՝ զիջելով միայն Պելաուսիին, Ղազախիստանին եւ Չինաստանին:

«Կարելի է համարել, որ ապրիլեան իրադարձութիւնները դարձան այն կէտը, երբ մարդիկ հասկացան, որ պատերազմական իրավիճակներում ոչ մի երկիր չի գալու Հայաստանին օգնելու Ղաբաթաղի հարցում», - կը մեկնաբանէ Լաուրա Պաղտասարեանը:

ՍԴԿԿ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ ԴԵՄՊԱՆ ԿՅՈՒՆԻ ԳԻՐՔԻՆ ԸՆՈՐԱՇԱՆԴԵՍ ԳԱՐԻԶԻ ՍԷՉ



Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Ֆրանսայի «ՆԱՉԱՐԲԷԿ» երիտասարդական միութեան կազմակերպութեամբ, Հոկտեմբեր 28, 2016-ին Փարիզի մէջ տեղի ունեցաւ 2002-2006 թուականներուն Հայաստանի մէջ Ֆրանսայի արտակարգ եւ լիազօր դեսպան Անրի Կյունիի «ՀԱՅԱՍՏԱՆ, ՄԻ ԺՈՂՈՎՐԴԻ Ո՞ՒՅ» գիրքի շնորհահանդէսը: Պարոն դեսպանն իր խօսքին մէջ անդրադարձաւ հայ ժողովուրդի հազարամեայ պատմութեան եւ մշակոյթին, արտաշայտեց իր յարգանքն ու կապուածութիւնն Հայաստանի հանդէպ, որ իսթան հանդիսացաւ գիրքի հրատարակութեան: Խօսելով Ապրիլեան պատերազմի մասին՝ դեսպան Կյունիին նկատեց որ Ատրպէյճանի իշխանութիւնը, ըլլալով բռնապետական եւ ընտրուած չըլլալով այդ երկրի քաղաքացիներու կողմէ, ամէն ինչ պիտի ընէ սահմանաչիւ լարուածութիւնը պահելու համար:

Ըստ Դեսպանին, միայն ռազմական գործողութիւնները կրնան երկարացնել Ատրպէյճանի բռնապետին:

պետին իշխանութիւնը: Շնորհանդէսին ելոյթ ունեցաւ նաեւ ՍԴՀԿ Հայաստանի վարչութեան Ատենապետ Ընկեր Նարեկ Գալստեանը, որ իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց Դեսպան Կյունիին իր նախաձեռնութեան եւ հեղինակած գիրքի համար, ինչպէս նաեւ կարեւորեց հայ-ֆրանսական բարեկամական յարաբերութիւններուն վերջինիս ունեցած ներդրումը: Նարեկ Գալստեանը խօսեցաւ նաեւ միջոցառման կազմակերպիչ «ՆԱՉԱՐԲԷԿ» երիտասարդական միութեան մասին, որ Ապրիլեան պատերազմին գործունեայ մասնակցութիւն ունեցաւ բանակին անհրաժեշտ որոշ ապրանքատեսակներու նուիրատուութեամբ: ՍԴՀԿ Ատենապետը նշեց, որ ռազմական գործողութիւնները դեռ չաւարտուած՝ «ՆԱՉԱՐԲԷԿ»-ի երիտասարդներն արդէն Արցախ էին: Հուսկ՝ Նարեկ Գալստեանը ՍԴՀԿ Հայաստանի վարչութեան կողմէ պարգեւատրեց երիտասարդական միութիւնը «ՄԵԾՆ ՄՈՒՐԱՏ» շքանշանով:

ՀԱՅԻ-Ի Յայտարարութիւնը Արցախի, Հայաստանի եւ Հալէպահայութեան Մասին

Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդը (ՀԱՀԽ-ը) իր Հոկտեմբեր 20-21, 2016-ի Ֆիլատելֆիայի մէջ տեղի ունեցած լիանիստ ժողովին մէջ, ի միջ այլոց, խորհրդածուծեանց առարկայ դարձուց Արցախի եւ Հայաստանի անկախութեան 25-րդ տարեդարձը, ինչպէս նաեւ Հալէպահայութեան փոթորակի կացութիւնը եւ ըրաւ հետեւեալ երկու յայտարարութիւնները:-

«Ընթացիկ տարուան Սեպտեմբեր 2-ին Լեռնային Ղարաբաղի (Արցախ) Հանրապետութիւնը եւ Սեպտեմբեր 21-ին Հայաստանի Հանրապետութիւնը տօնեցին իրենց անկախութեան 25-ամեայ տարեդարձը:

Պատմական այս նշանակալից հանգրուանին, Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդը իր սրտագին շնորհաւորութիւնները կը յայտնէ հայոց զոյգ հանրապետութիւններուն՝ մաղթելով անոնց նոր նուաճումներով լի ցնծման տարիներ: ՀԱՀԽ-ը միանգամայն կը վերահաստատէ իր յանձնառութիւնը նեցուկ կենալու Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւններու անկախութեան պահպանումին եւ բարգաւաճումին»:

ՀԱՀԽ-ը նաեւ խորհրդածուծեան նիւթ դարձուց Մերձաւոր

Արեւելքի կարգ մը երկիրներու մէջ գտնուող հայկական գաղութներու անկախութեան կացութիւնը, յատկապէս Հալէպի մէջ տեղի ունեցող արիւնալի բախումներն ու անոնց հետեւանք եղող մարդկային զոհերն ու նիւթական կորուստները, ինչպէս նաեւ գաղթական հայերու տխուր պարագան, եւ որոշեց հետեւեալը:-

«Աւելի քան հինգ տարիներէ իվեր Սուրիոյ քաղաքացիական պատերազմի հետեւանքով Հալէպահայութեան կրած մարդկային եւ նիւթական կորուստները մեծ ցաւ կը պատճառեն Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդին, որուն անդրդուելի յանձնառութիւնն է վերաշինել մեր եկեղեցական եւ մշակութային կառուցները: Իսկ ինչ կը վերաբերի Սուրիահայութեան արտագաղթին, ՀԱՀԽ-ը անգամ մը եւս կը վերահաստատէ իր յանձնառութիւնը օժանդակելու անոնց, որոնք որոշած են մնալ իրենց բնակած վայրերուն մէջ կամ որոշած են գաղթել Հայաստան:

Մինչ այդ մեր աղօթքը այն է որ Աստուած խաղաղութիւն շնորհէ տաղանապահար Միջին Արեւելքի երկիրներուն, յատկապէս Սուրիոյ եւ Հալէպահայ գաղութի մեր սիրելի հայրենակիցներուն»:

Դիւան Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդի

Սերժ Սարգսեանը Պէտք է Միջազգային Օրինականութիւն Ստանայ Վարչապետ Դառնալու Համար

Դժուար է ըսել, որ Սերժ Սարգսեանի համար վերջնական որոշում է կամ հիմնական յատկագիծ է վարչապետ դառնալը: Մեկնաբան Յակոբ Պատալեան յայտնեց, «Ես կարծում եմ, որ այդ հարցը միայն ներքին իրավիճակով չէ պայմանաւորուած, դրա համար էական նշանակութիւն կ'ունենայ նաեւ աշխարհաքաղաքական կեդրոնների արձագանքը, որոնք սերտ գործակցում են Հայաստանի հետ՝ Մոսկուան, Ուաշինգթոնը, Պրիսկը: Այսինքն՝ այստեղ միայն Սերժ Սարգսեանի ցանկութիւնը բաւարար չէ, Սերժ Սարգսեանը պէտք է կարողանայ միջազգային լեգիտիմութիւն ստանալ իր այդ ծրագրերի համար», - նշեց Պատալեանը:

Յիշեցնենք, մօտ երկու տարի առաջ Սերժ Սարգսեանը պաշտօնապէս յայտարարեց, որ խորհրդարանական համակարգին անցնելու պարագային ինք չի հաւանել վարչապետի պաշտօնին: Սակայն օրեր առաջ Al Jazeera-ին տուած հարցազրոյցի ընթացքին Սարգսեան այդ հնարաւորութիւնը չբացառեց՝ ըսելով, թէ իր վարչապետ դառնալու հարցը պայմանաւոր-

ուած է ընտրութիւններուն իշխող Հանրապետականի ստացած քուէներու քանակով:

Պատալեանի համոզմամբ, «Զի բացառուում, որ նոյնիսկ սա արուել է ընդամենը մարտավարական նկատառումներից ելնելով՝ առաջնորդուելով ներկայիս ներիշխանական իրավիճակով, որտեղ բաժանարար գծերը բաւական խորանում են: Աւելին՝ նոր կառավարութիւն է ձեւաւորուում, որը յայտարարում է տնտեսական փոփոխութիւններ իրականացնելու մասին, ինչը գործնականում անհնար է՝ առանց իշխանութեան ներսում եղած տարբեր թիմերի հետ շահերի բախման եւ այստեղ չի բացառուում, որ Սերժ Սարգսեանն այս պահին գոնէ այդ ակնարկն անում է՝ ցոյց տալու, որ ինքը հեռացող չէ ամենեւին եւ չեն կարող իրեն դուրս դնել գործընթացներից եւ փորձել արդէն շրջանցելով իրեն ինչ-որ յարաբերութիւններ պարզել», - ըսաւ մեկնաբանը:

Այսօր, ըստ Պատալեանի, իշխանութիւնը կ'առաջնորդուի առաւելապէս մարտավարական հաշուարկներով եւ նկատառումներով:

ՊՈԼՍՈՒԿ ԴԱՅՈՑ ՆՈՐ ՊԱՏՐԻԱՐԲ ԸՆՏՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՅ ՍԿՍԱԾ Է

Պոլսոյ Հայոց պատրիարքութեան աթոռի եկեղեցական ընդհանուր համաժողովի ժամանակ պատրիարքական աթոռի «Թափուր» յայտարարումը եւ նոր պատրիարք ընտրելու գործընթաց սկսիլը պատմական որոշում էր: Այս մասին, ըսաւ Ստամբուլի հայկական «Ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Արա Գոչունեանը:



Պոլսոյ Հայոց պատրիարք Սեւրոպ Սուրաֆեան

«Պատրիարքարանի մեր աղբիւրներէն տեղեկացած ենք, որ որոշումը ընդունուած է պատրիարքական ընդհանուր փոխանորդ Արամ արքեպիսկոպոս Աթէշեանի եւ կրօնական ժողովի ատենապետ Տէր Սահակ եպիսկոպոս Մաշալեանի համախոհութեամբ: Այսօր այս իրադարձութեամբ պաշտօնապէս թուրքիայի հայրութեան առջեւ ուրուագծուած է նոր պատրիարք ընտրելու հեռանկարը», - նշեց Գոչունեանը:

Պոլսոյ Հայոց պատրիարք Սեւրոպ Սուրաֆեան

ընտրութիւններ անցկացուին», ընդգծեց Գոչունեանը:

Ան յիշեցուց, որ Պոլսոյ պատրիարքական աթոռը արդէն ութ տարի է՝ գործնականապէս թափուր էր: Ինչպէս թրքահայութիւնը, այնպէս ալ պատրիարքարանը երկար ժամանակ սպասողական վիճակի մէջ էր: 26 Հոկտեմբերին գումարուած եկեղեցական համաժողովի ժամանակ նկատի առնուած է այն, որ եկեղեցական կանոններու համաձայն՝ պատրիարքի եօթ տարուան բացակայութիւնը բաւարար է ուխտի լուծարման համար: Հետեւաբար, Պատրիարքի ութ տարուան բացակայութիւնը կը հաստատէ «Պատրիարքական ուխտի» լուծարումը: Իսկ 2015 թուականի դեպտեմբերի յանձնախումբի տեղեկագրով վաւերացուած Պատրիարքի ոչ գործուն ըլլալու հանգամանքը հաստատեց, որ Պատրիարքական աթոռը մնացած է «Թափուր»:

Ան տեղեկացուց, որ 27 Հոկտեմբերի առաւօտեան Արամ արքեպիսկոպոս Աթէշեանը մեկնեցաւ Նիւ Եորք, որպէսզի մասնակցի Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի գլխաւորութեամբ այնտեղ գումարուելիք գերագոյն հոգեւոր խորհուրդի ընդլայնուած կազմով նիստին: 6 Նոյեմբերին Աթէշեանը պէտք է վերադառնայ Ստամբուլ, որմէ չետոյ անհրաժեշտ դիմում կը կատարուի պետական իշխանութիւններուն, որպէսզի ընտրութեան գործընթացը նոր մեկնարկ ստանայ:

«Այս փաստերուն հիման վրայ կայացուած է որոշում երթալ պատրիարքական ընտրութիւններու: Պէտք է ընտրուի նոր՝ «Ազգընտիր պատրիարք», ով կը դառնայ Պոլսոյ Հայոց 85-րդ պատրիարքը: Մօտ ապագային եկեղեցական համագումարի զեկոյցը պէտք է կցուի պաշտօնական նամակին, որը կ'ուղարկուի թուրքական պատկան մարմիններուն: Անհրաժեշտ է ստանալ թուրքիայի ներքին գործերու նախարարութեան հաւանութիւնը, որպէսզի պատրիարքական

Խօսելով Պոլսոյ պատրիարքի հնարաւոր թեկնածուներուն մասին՝ Գոչունեանը փաստեց, որ Պատրիարքական աթոռի միաբան բոլոր եպիսկոպոսները տեսականօրէն թեկնածուներ կը համարուին:

«Մի քիչ վաղ է խօսիլ թեկնածուներուն մասին, սակայն շրջանառուող անուններու շարքին են Աթէշեանն ու Մաշալեանը, Գերմանիայի թեմի առաջնորդ Գարեգին Արքեպիսկոպոս Պեքշեանը, ով թուրքիայի քաղաքացի է: Քննարկուող անուններու շարքին են իսթաթակ արքեպիսկոպոս Պարսամեանը եւ Վիգէն արքեպիսկոպոս Այքազեանը, թէպէտ անոնք նախապէս յայտարարած էին, որ մտադիր չեն պատրիարք դառնալու», - յայտնեց Գոչունեանը՝ յիշեցնելով, որ այդ բոլորի համար նախեւառաջ անհրաժեշտ է ստանալ պետական թոյլտուութիւն:

Ան տեղեկացուց նաեւ, որ յառաջիկային Սուրբ պատարագներու ժամանակ Ստամբուլի եկեղեցիներուն մէջ պատրիարք Մեսրոպ Մութաֆեանը պէտք է յիշատակուի որպէս «Հանգստեան կոչուած պատրիարք»:

Հայ Ամերիկեան Խորհուրդը Կը Զօրակցի

Շարունակուած էջ 1-էն

նաժու Արտաշէս Քասախեանին եւ Լոս Անճելոս Գաւառի վերակացուներու Խորհուրդի 5-րդ ընտրաշրջանի թեկնածու Քէթրին Պարկըրին:

Քէթրին Պարկըրի կապակցութեամբ ՀԱՆ Խիստ կարեւոր կը նկատէ անոր ունեցած երկարամեայ փորձառութիւնը՝ որպէս այդ աթոռի այժմու վերակացու Մայք Անթոնովիչի գրասենեակի ղեկավար:

Այս առթիւ հրապարակուած գորակցական հարցազրուութիւններուն մէջ ՀԱՆ կու գայ յայտարարելու թէ, Քասախեան միշտ եղած է իրագործումներ արձանագրած համայնքային գործիչ մը: Ան յանձնառու եղած է զարգացնելու շրջանի տնտեսութիւնը ու բարելաւելու դպրոցներու եւ թաղամասերու վիճակը:

Քէթրին Պարկըր եղած է Հայ համայնքի երկար տարիներու բարեկամը, մեծ օգտակարութիւն ունենալով շրջանի ժողովուրդին:

Հայ Ամերիկեան Խորհուրդը կոչ կ'ընէ շրջանի հայութեան անպայմանօրէն մասնակցելու Նոյեմբեր 8-ի ընտրութիւններուն եւ քուէարկելու վերոյիշեալ թեկնածուներուն:

«ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՅԵՐՈՒ ԱՊԱԳԱՆ ԱՅՍՕՐ Է» ԽՈՐԱԳՐՈՒԱԾ ԲԱՅ ՆԱՄԱԿ՝ ՍՏՈՐԱԳՐՈՒԱԾ ԱՆՈՒԱՆԻ ՀԱՅԵՐՈՒ ԿՈՂՄԷ

Ուրբաթ, 28 Հոկտեմբերին, IDEa հիմնադրամին նախաձեռնութեամբ, «Հայաստանի Հանրապետութիւն» եւ «The New York Times» թերթերուն մէջ հրատարակուած է «Համաշխարհային («Գլոբալ») Հայերու Ապագան Այսօր է» խորագրուած բաց նամակը՝ ստորագրուած տարբեր երկիրներու մէջ բնակող անուանի հայերու կողմէ:

Նամակը հրատարակուած է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ) 110րդ տարեգարձին առիթով:

Ստորեւ՝ «Պատմական հնարաւորութիւն» հայերու միաւորման եւ Հայաստանի ապագան միասնաբար կերտելու համար» ենթախորագրուած նամակը:

Այս շաբաթ աշխարհի խոշորագոյն հայկական կազմակերպութիւնը՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը (ՀԲԸՄ), Նիւ Եորքում տօնում է իր 110րդ տարեգարձը: Այս հանգրուանը բացառիկ հնարաւորութիւն է Հայաստանի ապագան վերաճեցնելու համար եւ մտածելու, թէ մեզանից իւրաքանչիւրն ինչպէս կարող է մասնակցել վաղուայ առաւել հզօր Հայաստանի կերտմանը:

Հայաստանում եւ Սփիւռքում ծառայող մարտահրաւէրներին դիմակայելու համար հիմնուած ՀԲԸՄն տարիների ընթացքում խթանել է սոցիալ-տնտեսական նախաձեռնութիւնները եւ աշխարհով մէկ հոգացել կրթական, մշակութային եւ մարդասիրական կարիքները: Մենք շնորհաւորում ենք ՀԲԸՄին Սփիւռքի համայնքներում հայկական ինքնութեան պահպանման գործում անդնահատելի դերի կապակցութեամբ:

Նախնիների հողից բուն տեղահանուած աշխարհափրկ հայերն իրենց ապաստան տուած երկրների զարգացման գործում մեծ աւանդ են ունեցել: Մենք վաղուց սովորել ենք ինտեգրուել մեզ հիւրընկալած երկրներում եւ հաւատարիմ քաղաքացիներ լինել՝ Հայ եկեղեցու եւ քրիստոնէական մեր հաւատքի միջոցով պահպանելով պատմական ինքնութիւնը եւ լեզուն:

Մենք ողջունում ենք բոլոր հայորդիների եւ կազմակերպութիւնների՝ Հայ Աւետարանչական ընկերակցութեան, Հայ Օգնութեան Միութեան, «Գիւլբենկեան» հիմնադրամի եւ միւսների երկարաժամկետ նուիրատուութիւնները, որոնք նպաստել են Սփիւռքի պահպանմանը բարեգործական ծրագրերի միջոցով:

Ի թիւս այլոց, մենք ճանաչում ենք անկախութիւնից ի վեր Հայաստանի զարգացման գործում հսկայական աւանդ ունեցած բարերարներ Գրք Գըրգորեանի եւ Լուիզ Սիմոն Մանուկեանի անունները: 1990ականների սկզբին այս առաջամարտիկների ջանքերը կենսական նշանակութիւն ունեցող հաստատութիւններ եւ ենթակառուցուածքներ ստեղծելու հնարաւորութիւն տուեցին:

Նախկին Խորհրդային Միութիւնից անկախմայլոց քառորդ դար անց Հայաստանի երիտասարդ հասակակիցները դեռեւս խոցելի է, ինչպէս եւ հայկական ինքնութիւնն աշխարհում: Այժմ մենք պատմական խաչմերուկում ենք եւ սթափ գնահատելով առկա մարտահրաւէրները, առջեւում նաեւ աննախադէպ հնարաւորութիւն ենք տեսնում:

Դա Հայկական աշխարհը բարգաւաճման մղելու, յետխորհր-

THE FUTURE FOR GLOBAL ARMENIANS IS NOW
Historic Opportunity for Armenians to Unite and Together Build Armenia's Future

THE FUTURE FOR GLOBAL ARMENIANS IS NOW. One of the world's largest Armenian organizations, established in 1977 and based in New York City, is launching the initiative in the near future to unite the future of Armenia and the future of our world's Armenian diaspora.

Over the years, IDEa, an organization established in Armenia, has challenged the Armenian diaspora to unite and build Armenia's future. IDEa has organized numerous conferences, seminars, and forums to bring together Armenians from around the world to discuss the future of Armenia and the future of our world's Armenian diaspora.

It is the ongoing commitment of IDEa, its members, and its supporters, such as the Armenian Literary Association, the Armenian Relief Society, the Armenian Relief Society, and the Armenian Relief Society, to continue to work together to build Armenia's future.

We are seeking the assistance of our members and supporters to help us in our mission to build Armenia's future. We are seeking the assistance of our members and supporters to help us in our mission to build Armenia's future.

A special event will be held in Armenia to mark the 100th anniversary of the Republic of Armenia's independence. We are seeking the assistance of our members and supporters to help us in our mission to build Armenia's future.

An opportunity for Armenians to unite and build Armenia's future. We are seeking the assistance of our members and supporters to help us in our mission to build Armenia's future.

An opportunity for Armenians to unite and build Armenia's future. We are seeking the assistance of our members and supporters to help us in our mission to build Armenia's future.

THE FUTURE FOR GLOBAL ARMENIANS IS NOW. One of the world's largest Armenian organizations, established in 1977 and based in New York City, is launching the initiative in the near future to unite the future of Armenia and the future of our world's Armenian diaspora.

դային պետութիւնը գլոբալ ազգի համար զարգացող, ժամանակակից, անվտանգ, խաղաղ եւ առաջադէմ հայրենիք դարձնելու հնարաւորութիւնն է:

Ոչ միայն Ցեղասպանութիւնը վերապրելու, այլեւ վերածնունդը եւ առաջ գնալու հնարաւորութիւնն է:

Հայաստանի երկարաժամկետ սոցիալ-տնտեսական զարգացման հնարաւորութիւնն է՝ ոչ միայն յանուն մեր քաղաքացիների, այլեւ երեխաների ու մեր ժողովրդի ապագայի:

Առաջ շարժուելով՝ ողջ աշխարհի հայութիւնն առաւել յանձնառու պէտք է լինի՝ սոցիալական ազդեցութեան թէ առեւտրային ներդրումների, նորարարութիւնների, փորձի թէ ակտիւ ներգրաւման միջոցով: Երկարաժամկետ հեռանկարում մենք պէտք է ձգտենք առնուազն համապատասխանեցնել Հայաստանը համաշխարհային այնպիսի չափանիշներին, ինչպիսիք գործում են մեզանից շատերին հիւրընկալած երկրներում:

Անհատական ջանքերից բացի մենք ցանկանում ենք բոլոր հայորդիների եւ հայկական կազմակերպութիւնների միջեւ համագործակցութեան եւ համախմբման աննախադէպ ոգի ստեղծել: Կոչ ենք անում հայերին ազգի սոցիալական, տնտեսական, մշակութային եւ տեխնոլոգիական ուժը վերականգնելու ուղղութեամբ երկարաժամկետ ներդրումներ իրականացնել՝ առանցքում ունենալով Հայաստանը: Միեւնոյն ժամանակ, մենք Հայաստանի կառավարութեանը զարգացման նոր, համատեղ ջանքերի վրայ հիմնուած ռազմավարութիւններ ներդնելու միջոցով այս ուղիքին արձագանգելու կոչ ենք անում:

Յանուն Հայաստանի յառաջադրարարական աշխատող անհատները, ինչպէս նաեւ հասարակական եւ մասնաւոր կազմակերպութիւնները հայ ժողովրդի ապագան աւելի լաւ դարձնելու համար պէտք է համախմբուեն, միաւորեն իրենց միջոցները եւ համագործակցեն: Մենք վստահ ենք, որ յաջողութեան հասնելու համար չի կարելի մեկուսացած՝ որպէս Հայաստան եւ Սփիւռք գործել. մենք պէտք է համախմբուենք եւ միասնական ուժ դառնանք:

Մենք այս քայլը նախաձեռնում ենք Հայաստանը միասնաբար առաջ մղելու երկարաժամկետ յանձնառութեամբ եւ ողջունում ենք բոլոր նրանց, ովքեր կը միանան մեզ:

Միասին մենք «Գլոբալ հայեր» ենք: Եկե՛ք է՛ ժամանակը, որ գլոբալ հայերը հանդէս գան համարձակ նախաձեռնութեամբ:

ԱՐՑԱԽԻ ՀԱՐՑՈՎ ՆՈՐ ԹԵԺԱՑՈՒՄՆԵՐ ՉԵՆ ՍՊԱՍՈՒԻՐ

ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

Առաջին անգամը չէ, որ ԵԱՀԿ Մինսքեան խումբի ամերիկացի նախագահը «սառը ցնցուղ»ի դեր կը կատարէ: Ժէյմս Ուրոլլիք, որ անցնող օրերուն Երեւան կը գտնուէր յայտարարած է, թէ երկու հակամարտող կողմերը (Հայաստան եւ Ազրայէջճան) պէտք է մէկդի դնեն զիրար մեղադրելու մօտեցումները եւ ... նային առաջ:

Այսինքն Ուրոլլիք «նպատակայարմար» չի նկատեր դատապարտել անցնող Ապրիլին Պաքուի կողմէ սկիզբ առած զինուորական գործողութիւնները, հակառակ անոր, որ արցախեան հիմնախնդրին հետ մօտէն կամ հեռուէն կապ ունեցող բոլոր կողմեր լաւատեղեակ են, որ ո՞վ առաջինը սկսաւ այդ աննախընթաց պատերազմը:

Հայաստանի իշխանութիւններու սպասումները, խնդրին վերաբերեալ առնուազն միջազգային դատապարտում մը լսելու անգամ մը եւս ջուր կը դառնան:

Ու անկախ երկու կողմերուն ունեցած ծանր մարդկային կորուստներէն նոյն միջազգային հանրութիւնը կը յորդորէ «մոռնալ» եղածը եւ քայլ մը առջեւ անցնիլ ու ... նստիլ բանակցութեան սեղան:

Հայաստանի համար բոլոր իմաստներով անդամանելի այս վէրքը կը խորացնէ վիճը Ազրայէջճանի հետ խնդրի լուծման համար դրական, որեւէ տեղաշարժ ակնկալելու իմաստով:

Երկու կողմերն ալ քաջ գիտեն, որ այսօր արցախեան սահմաններուն վրայ եղած համեմատական անդորրը, օր մը կրնայ պայթիլ լուծելու համար հին, բայց մանաւանդ անցնող ապրիլին գոյացած «չփակուած հաշիւ»ը:

Այդ «հաշիւի տետր»ին մէջ յստակօրէն գրուած է, որ Պաքու չի պատրաստուիր իրական քայլեր կատարել խաղաղ ճանապարհներով լուծում մը գտնելու: Ու աւելին Ալիեւի եւ իր իշխանական օղակին համար «ներքին սպառման» համար դրօշակ դարձած Ղարաբաղի հարցը դարձած է, իր գոյութիւնը ամրացնելու երաշխիք:

Ժիշդ է, որ Պաքուի մէջ եղած սահմանադրական փոփոխութիւններու արդիւնքները Ալիեւը «գոհ ձգելու» բաւարար արդիւնքներ ունեցան- բայց դարաբաղեան հարցը կը շարունակէ մնալ հերոսական «թուղթի սուրեր» ճօճե-

լու լաւագոյն «գէնք» մը:

Այս իմաստով ալ երկու երկիրները ունին հակոտնեայ մօտեցումներ: Մինչ Հայաստանի համար սպառազինումը եւ սահմանները պահպանելու դրուածքները հետեւանք են Պաքուի «պատերազմասէր» մօտեցումներուն, անդին նոյն Պաքուի համար Ղարաբաղեան հիմնահարցը դարձած է նպատակ՝ իրենց իշխանութիւնները ամրացնելու համար:

Արդիւնքը՝ ապրիլեան դէպքերուն Ատրպէյճանի ստացած «ապտակ»ն է, որ դժբախտաբար տրուեցաւ, ի զին հարիւրէ աւելի հայ նահատակներու արիւնով:

Վերադառնալով Ուրոլլիքի ձեւակերպումներուն յստակ կը դառնայ նաեւ, որ միջազգային հանրութեան համար Ղարաբաղի հարցին լուծումը ձեռնադր է:

Երբ մօտիկ անցեալին արեւմտամէտ մէկէ աւելի վերլուծողներ նման կարծիք կը յայտնէին Մոսկուայի մասին, այսօր յստակ է, որ ոչ միայն Մոսկուա, այլ նաեւ Ուաշինգթոն տրամադրուած չեն այս խնդրին համար լուծման իրական ճանապարհներ որոնել:

Եթէ Մոսկուայի համար դարաբաղեան հիմնահարցին այս հուսին մէջ մնալը երկու հակառակորդ հարեւաններուն յաւելեալ գէնքեր վաճառելու միջոց է, ապա արեւմուտքին համար ալ հարաւային կողմի մէջ այս «մարած լաւա»ի գոյութիւնը կարեւոր միջոց է Մոսկուան անհանգստացնելու համար:

Ժիշդ է նաեւ, որ երկու գերպետութիւններուն հակամարտութիւնը կը մղուի Միջին Արեւելքի արիւնոտ «աւազներուն» մէջ սակայն այդ «հակամարտութիւն»ը կողմի ստանելու հաւանականութիւնները դեռ եւս չեն սպառած:

Այս ընդհանուր իրադրութեան մէջ Հայաստանը ունի մէկ ընելիք: Համալրել անցնող ապրիլին ի յայտ եկած բոլոր բացթողումները, զինել բանակը եւ մանաւանդ օգտուիլ Արցախի հարցով ստեղծուած համահայկական ընդհանուր տրամադրութիւններէն:

Արցախի մէջ կարեւորագոյն գործեր կան կատարուելիք, որոնց ամէնէն առաջնայինը Ղարաբաղի բժշկական ոլորտի, հիւանդանոցներու, բժշկական մարդու չի մայրումն է, որ պէտք է դառնայ համահայկական մտահոգութիւններու գլխաւորը:

Այդ աշխատանքները քաղաքական կամք չեն ուզեր, այլ

պէտք ունին տեսիլքի ու այդ տեսիլքը կը գտնուի Արցախի կառավարութեան գրասեղանին վրայ: Յստակ է նաեւ, որ սփիւռքի մէջ Արցախի համար այս օրերուն գոյացած դրական մթնոլորտը լաւագոյն դրամազրուէն է կէս մնացած կամ սկիզբ չառած գործերը ճամբայ հանելու:

Վերադառնալով հարցի քաղաքական երեսին պէտք է նաեւ շեշտադրել, որ ներկայ փուլը «ժամանակ» չահելու փուլ մըն է նկատի առնելով, որ միջազգային հանրութեան համար Արցախը հակամարտութիւններու «կարմիր քարտէզ»ին վերադարձնելը պիտանի գործ չէ, ոչ միայն Մոսկուայի այլ նաեւ Միացեալ Նահանգներուն համար:

Այստեղ պէտք է կարեւոր ըմբռնումով յիշատակել Մոսկուա-Անգարա յարաբերութիւններուն մէջ եղած «դրական տեղաշարժը», որն ամբողջութեան կը գրկէ Արցախը երկու հօր տէրութիւններուն համար «նամակատուփ» մը դարձնելու վտանգաւոր դրոյթէն:

Էրտողան-Փութին նոր հուն մտած «մասնակի սիրաբանութիւն»ը կ'արգիլէ մանաւանդ, որ երկու կողմերուն ունեցած գէնքերուն առաջին փորձարկումներու դաշտը՝ Արցախը դառնայ:

Այստեղ չպէտք է անտես առնել այն փաստը, որ Անգարա իր պահուածքով «ապերախտ» դաշնակից մը դարձաւ Պաքուի համար:

Էրտողանի ու անոր իշխանութեան համար շատ աւելի կարեւոր է ռուս գրօսաշրջիկներուն ու Մոսկուայի գործարարներուն դրամական «ներհոսք»ը, քան Պաքուի հետ զինուորական նոր գործարքներ կնքելը:

Ի վերջոյ պատերազմներու թիւ մէկ առաջադրանքը տնտեսական պէտքերու յագուրդ տալն է, սակայն այսօր Ռուս-թրքական յարաբերութիւններու «վերաջերմացման» հետ այդ փաստը մանաւանդ Արցախի պարագային կը դադրի առաջնային իմաստ մը ունենալ:

Չմոռնանք նաեւ, որ Էրտողանի Սէյնթ Փեթերսպուրկ (9 Օգոստոս) տուած այցէն ասդին Մոսկուա քիւրտներուն հետ այլ լեզու մը կը խօսի:

Քիչ չեն այն վերլուծաբանները, որոնք ցայսօր «երեւելի» արդիւնքներ կը սպասեն Էրտողան-Փութին համագործակցութիւնէն:

Այդ «համաձայնութիւններու» հիմնական մասը կը սպասուի Սուրիոյ մէջ, սակայն ցայսօր եւ Հալէպի եւ Սուրիա-Թուրքիա սահմանային հատուածներուն մէջ Թուրքիա «իր երգը կ'երգէ»: Այս առումով սակայն հասկնալու եւ տեսնելու համար այդ հասկացողութիւններու ընդհանուր պրիսմակը, պէտք է անպայման մտաբերել թրքական բանակին սուրիական ճարապուստ աւան մուտք գործելու փաստը:

Թրքական ուժեր օրը ցերեկով հատեցին Սուրիոյ սահմանները եւ միջազգային բոլոր օրէնքները խախտելով յաջողեցան հարուած տալ «քրտական երազ»ի մը, լոր սկսած էր «թեւեր առնել»:

Այս բոլորը, անշուշտ որ կատարուեցան Մոսկուայի «կանաչ լոյս»ով, որուն դիմաց Անգարա յառաջիկայ օրերուն «իր տուրքը» պիտի տայ Մոսկուային:

Կայ նաեւ քիւրտներուն հանդէպ «սառը քաղաքականութիւն» մը կիրառելու Մոսկուայի կեցուածքը, որուն առջեւ յատկապէս Թուրքիոյ քիւրտներուն համար «արեւոտ օրեր» չեն սպասուիր:

Այս բոլոր տուեալները աչքի առաջ ունենալէ ետք յստակ կը դառնայ, որ Արցախի «հակամարտութեան օճախ»ը մարած պահելու գործընթացը դեռ երկար կրնայ տեւել, առանց սակայն բացառելու, որ արցախեան սահմաններուն ներկայիս ընթացող «դասական հակամարտութեան» վիճակը շարունակէ մնալ տիրական:

Պէտք է հասկնալ, որ կողմիսի մէջ ընթացող գործընթացներուն եւ Մոսկուա-Անգարա նոր մերձեցման ֆոնին անհնար է, որ դարաբաղեան հակամարտութիւնը թե՛ ժամայ տազնապի նոր դուռ դառնալով Մոսկուայի համար:

Հայաստանի համար միջազգային հանրութիւնէն դատապարտում պահանջելու ժամանակները կը պատկանին անցեալին ու այսօր աւելի քան, որեւէ ատեն յստակ է, որ Արցախի անվտանգութիւնը եւ անոր ապահովութիւնը կը գտնուին միայն հայ զինուորին ձեռքերուն մէջ:

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

Bedros S. Maronian 818/500-9585
Siamanto B. Maronian 818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048	805 East Broadway Glendale, CA 91205	300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101
---	---	--

- Life Insurance
- Health Insurance
- Group & Individual
- Long Term Care
- Disability
- Estate Planning
- Will & Living Trust
- Full Annual Review
- Mortgage Protection
- College Planning
- Workman's Compensation
- Employee Benefits
- Annuity
- IRA
- 401K & 403B

NEW YORK LIFE **Anthem** **BlueShield** **Aetna** **Health Net** **CIGNA** **KAISER PERMANENTE**

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրածեղտ է

Coverage & Protection should be on the top of your priority list.

«ԱՆԱՊԱՏԻ ԱԳՈՒԲՆԵՐԸ» ՖԻԼՄԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՐՑԱԶԻՐՈՅՑԻ ՄԱՍԻՆ



Տ. Ա. ՎԱՆԱՏՈՒՐ

Հ.Բ.Ը.Մ-ի Արեւմտեան Ամերիկայի Շրջանային Յանձնախումբի նախաձեռնութեամբ, Կիրակի, Օգոստոս 23, Կ.Վ. Ժամը 5-ին, Պրպէնքի Ուտոլայրի համալսարանի Ֆլէշըր ձոն հանդիսարանի մէջ ցուցադրուեցաւ «Անապատի Ագուաները» ֆիլմը, որուն նիւթը վերցուած էր հայոց դէմ իրագործուած Յեղասպանութեան օրերուն գրուած յուշագրութեան մը:

Արզումանեանը իր այս թարգ- մանական գործում չի մոցրել երկի Ա. հատուածը, դրա մասին գրում է թէ այն նուազ կարեւորութիւն ունի, քանի որ Ուխտանէսը պար- զապէս ամփոփ կրկնել է ինչ որ գտել է իրեն նախորդած մի քանի մատենագիրների մօտ, եւ աւելաց- նում է՝ «Պատմագէտի մը գործը չէ կատարած Ուխտանէս» (էջ 11):

Մեզանից հազար տարի առաջ գրուած որեւէ պատմութիւն, ինչ- քան էլ մեծ մասամբ լինի ամփոփ կրկնութիւնը կամ քաղուածքները այլ եւ աւելի հին հեղինակների գործերի, ունենում են պատմագի- տական արժէք՝ մերթ պահուած լինելով հին բնագրերի՝ հետագա- յում փոփոխուած-աղաւաղուած մա- սերի հարազատ ձեւերը: Այդտեղ մերթ նշուած են լինում ուրիշների լքած մի թուական, մոռացուած մի անուն, անտեսուած մի փոքր դէպք, կամ նոյն հարցին մօտեցման մի այլ ձեւ, որոնք պատմութեան համար ներկայացնում են մեծ կարեւորու- թիւն: Արզումանեանն էլ արդէն յետոյ իրաւացիօրէն գրում է թէ «Սա անշուշտ ըսել չէ թէ Ուխտա- նէսի գործին առաջին մասը արժե- քէ բոլորովին գուրկ է, մանաւանդ որ Ուխտանէսի կարդացածը ամե- նահին գրչագիրը պիտի ըլլայ քան ինչ որ մեզի հասած են», եւ բերում է իր գնահատանքները այդտեղ գտնուած մի քանի տեղեկութիւն- ների մասին:

Վրաց Եկեղեցական Բաժանումը

Ուխտանէսը իր երկի Բ. հատ- ուածում մանրամասնօրէն պատ- մում է, թէ ի՞նչպէս եւ ի՞նչ պատ- ճառներով է պատահել Վրաց եկե- ղեցական բաժանումը Հայոց եկե- ղեցուց: Սա միակ եւ հաւաստի աղբիւրն է այս դէպքերի, որով նրա այս գործը ունի եզակի նշանակու- թիւն հայ-վրացական եկեղեցական փոխ-յարաբերութիւնների պատմու- թեան համար: Հէնց այս Բ. հատուածի թարգմանութիւնն է որ կատա- րել է Արզումանեանը իր ներկայ գործով, որի մասին ուզում եմ բերել իմ գնահատական դիտումնե- րից մի քանի կէտեր ներքեւում:

Կորսուած Գ. Մասը՝ Ծաղերի Մասին

Երկի Գ. հատուածը Ծաղ կոչուած ազգի մկրտութեան (երե- ւի հայերի միջոցով քրիստոնէ- ացման) պատմութիւնն է, որի մասին թէեւ Ուխտանէսը նշում է արել իր երկի «Նախերգանք»ում, բայց դժբախտաբար բացակայ է իր գրքից: Ի հարկէ, եթէ այս հատուածը գտնուած լինէր գրքում, բացի եկեղեցական պատմութեան համար ունեցած կարեւորութիւ- նից, կարող էր պարունակած լի- նել որոշ տեղեկութիւններ Ծաղ կոչուած ցեղի ինքնութեան, նրա աշխարհագրական ճիշդ վայրի, շրջապատի ու հարեւանների մա- սին՝ լոյս սփռելով պատմագի- տութեան մէջ այդ շրջաններին վերաբերող դեռ մի շարք մութ հարցերի շուրջ:

Ոմանք, նրանց թւում եւ Արզումանեանը, կարծում են թէ այս Գ. հատուածը նախապէս եղել է Ուխտանէսի գրքում, բայց յետոյ հանուել է, ըստ M. Brosset-ի կար- ծիքին, այն պատճառով որ ան- ջատուելով Հայ եկեղեցուց, իրենց վրայ վրայ հրաւիրած են եղել

հայերի թշնամութիւնը: Մինչդեռ, ընդհակառակը, հայերը կը պահէին այդ հատուածը, ցոյց տալու համար Հայ եկեղեցու առաջնայնութիւնը եւ Ծաղերի ապերախտութիւնը, ինչպէս պահել են Բ. հատուածը, ուր երեւում է Վրացիների ապե- րախտութիւնը:

Սակայն, Ուխտանէսի Նախեր- գանքի հետեւեալ մասը Արզուման- եան կարեւորութեամբ մէջբերում է, «Չմկրտութիւն ազգին որ Ծաղն կոչի նաեւ զգաւառս եւ զգեղս զլիւաւորս, եւ զքաղաքս եւ զբերդս իւրաքանչիւր գաւառօք որ են յաշ- խարհին յայնմիկ, որպէս եւ կամք քո հրամայեցին, եւ զվանօրայս հանդերձ վանականօք անուամբ իւ- րաքանչիւրոց, եւ զանապատս միայ- նաւորաց, եւ որք միայնակեացք բնակեալ յապատս եւ յանապատս» (էջ 4):

Գիտահետազոտական Աշխատանք

Ինչպէս ասացի Արզումանեա- նի այս գործը հանդիսանում է Ուխտանէս-ի պատմութեան Բ. հատուածի թարգմանութիւնը: Նա այստեղ էլ, ինչպէս Ղեւոնդի պատ- մութեան թարգմանութեան դէպ- քում, չի եղել պարզ թարգմանիչ, այլ կատարել է գիտահետազոտա- կան աշխատանք, եւ իր բերած պատմագիտական ծանօթագրու- թիւններով պարզաբանել է մի շարք բարդ ու անորոշ կէտեր, որոնք օտարի համար անհասկանա- լի կը լինէին կարգալով լոկ մերկ թարգմանութիւնը:

Հազարաւոր տարիներ առաջ գրուած երկ մը յաջողութեամբ թարգմանելու համար, թարգմա- նիչը գրաբարին եւ տուեալ օտար լեզուին լրիւ տիրապետելուց զատ, պէտք է կարողանայ ապրել այդ անցեալը եւ թափանցել օգտա- գործուած բառերի ու դարձուածք- ների ներքին թաքուն իմաստին, որպէսզի կարողանայ հարազատ մնալ բնագրի ոգուն: Վանական մեր հին Հոգեւոր Հայրերի գործերը լաւ ընկալելու եւ հարազատօրէն վերարտադրելու համար թարգմա- նիչը պիտի լինէր այդ Հայրերի կոչման հարազատ ժառանգորդ եւ նոյնպիսի շնորհներով օժտուած հայ հոգեւորականը՝ ինչպիսին է հէնց ներկայ թարգմանիչ Հայր Արզումանեանը:

Արզումանեանը շատ ճիշդ ու կարեւոր ընտրութիւն է կատարել թարգմանութեան համար՝ եւ դա մեր այս ժամանակներին, երբ հայ ժողովրդի հոգեւոր հարստութիւնն ու համաշխարհային մշակոյթին մատուցած նպաստը օտարների ծանօթացնելու անհրաժեշտութեան տակ ենք գտնուում՝ մեր պատմու- թեան ներկայ ճակատագրական այս անցումային ժամանակ, երբ ուզում են մասնաւոր դիտումով ուրանալ կամ անտեսել հայ ժողովրդի ո՛չ թէ միայն լուսարար դերը, այլ հէնց գոյութիւնը:

Վրաց Բաժանումը

Անդրկովկասում, հայ ժողովր- դի մշակութային առաջատար դե- րի բացայայտման համար, շատ տեղին է Ուխտանէս-ի երկի Բ. հատուածի այս անգլերէն թարգ- մանութիւնը, որով աշխարհի առաջ ցոյց է տրուում որ վրացական քրիստոնէութիւնը նախապէս իր ծագումով հանդիսացել է մի մասը Հայոց եկեղեցու, եւ նրանց բարձ- րաստիճան հոգեւորականները նա- խապէս ընտրուում էին Հայոց կաթողիկոսի կողմից: Յետագային է որ Հայոց կաթողիկոսի կողմից

Վրաստանի եկեղեցական բարձրա- գոյն պաշտօնին նշանակուած կիւրի- ոն-ի ապերախտ սաղբանքներով, 7-րդ դարու սկիզբը, բաժանուել են Հայոց եկեղեցուց:

Տառադարձութեան Դրութիւնը

Արզումանեանը, ինչպէս Ղե- ւոնդի պատմութեան թարգմա- նութեան մէջ, այնպէս էլ այստեղ, տառադարձութեան համար որ- դեգրել է ճիշդ սկզբունք՝ ընդու- նելով հայերէն տառերի հնչիւնա- յին սկզբնական եւ ստուգաբանա- կան արժէքները, որովհետեւ թարգմանուողը գրաբարն է: Եւ քանի որ այս թարգմանում է անգլերէնի, ի հարկէ նա այստեղ կանգնած պիտի լինէր տառա- դարձման որոշ դժուարութիւն- ների առաջ, որոնք ծագում են հայերէնի համեմատութեամբ անգ- լերէնի հնչիւնային համակարգի ունեցած թերութիւնից եւ անգլե- րէնի ձայնային ներկայ յեղյեղուկ հանգամանքից: Որով ստիպուած է որոշ տեղեր, այնտեղ ուր բաւարար չէին անգլերէն տառերի հնչիւնա- յին հնարաւորութիւնները, տա- ռադարձման համար օգտագործել գիտութեան մէջ ընդունուած պայ- մանական տառանիշեր:

Բովանդակութեան Արժեքը

Ուխտանէս Պատմիչի ներկայ թանգմանիչը հազար տարիներ առաջ գրուած այս երկի՝ օտարնե- րի կողմից ճիշդ գնահատման հա- մար, թարգմանական իր յաջող գործից զատ, կատարել է երկի բովանդակութեան հետ կապուած մութ հարցերի, դէպքերի, դերա- կատար դէմքերի, աշխարհագրա- կան վայրերի եւ իրենց ժամանակ- ներին վերաբերող ընկերային եւ քաղաքական վիճակի մասին, պատ- մագիտական եւ հայագիտական հե- տազոտական աշխատանք, որը աւելի հետաքրքիր ու դիւրընկալելի է դարձրել Անդրկովկասի ժողովուրդ- ների մօտ հայ ժողովուրդի կատա- րած մշակութային լուսարար ու առաջատար դերի պատմութեան այս կարեւոր շրջանին վերաբերող Ուխտանէս-ի երկը:

Կարգալով այս շնորհալի կրկնակի վարդապետի գիտական ու թարգմանչական գործերը՝ դժուար է չլիշել մեր ոսկեդարեան առաջին թարգմանիչ Վարդա- պետ Հայրերին, որոնք հմտանա- լով հայկական, յունական, ասոր- րական, քաղդէական ու պարսկա- կան լեզուներին, օտար ժողո- վուրդների հոգեւոր գանձերն էին փոխադրում Մեսրոպեան հայերէ- նին՝ հարստացնելով հայ ժողովր- դի մտաւոր գանձարանը: Նրանք որոշ դէպքերում օտարների մեծ գործերը կորստից փրկելով հան- դերձ, նրանց վրայ աւելացնում էին իրենց հոգեւոր սխրանքները՝ կարեւոր նպաստ բերելով համաշ- խարհային քաղաքակրթութեան զարգացման գործին:

Հայր Զաւէն Արզումանեան որպէս արժանաւոր յետնորդն ու հաւատարիմ աշակերտն իր այդ անմահ վարդապետ Հայրերի, այս անգամ իր ո՛չ թէ ուրիշից մեզ, այլ մեզանից ուրիշներին է փո- խադարձում մեր ժողովրդի գան- ձերը, միջազգային հրապարակ հանելով անարժանների կողմից անիրաւուած հայ ժողովրդի մշա- կութային մոռացուած առաջա- տար դերը եւ այդպիսով գործնա- կան նպաստ բերում մեր ազգային իրաւունքների միջազգային ճա- նաչման համար թափուող մեր ներկայ համազգային ճիգերին:

ԱՐԱՐԱՏ ՏՈՒՆԸ

Ծ. Խ. Սոյն գրութիւնը «Մասիս»ին դրկուած է յօդուածագիրի կողմէ իր մատուցել օրեր առաջ եւ կը նկատուի հանգուցեալի «Կարապի երգը»:

ԼԻՏԻԱ ՏԵՐ-ԵՂԻԱՅԵԱՆ

Իր տեսակին մէջ՝ եզակի:
Իր ծառայութեան մէջ՝ գերազանց:

Իր առաքելութեան մէջ՝ գովելի:

Արարատ Տունն է Միշըն Հիլ-գի:

1949ին, խումբ մը տեսլալառամերիկահայեր իրարու քով գալով, նիւթի մը համար հաւատքով աղօթեցին, որպէսզի մեր հայ պապիկները եւ մամիկները իրենց կեանքին վերջալուստ անցնէին խաղաղ եւ երջանիկ: Տեսիլք ունէին կառուցանելու Տարեցներու Տուն մը: Երազը իրականացաւ 1951-ին, երբ անոնք Լոս Անճելըսի West Adams շրջանին մէջ գնեցին հողամաս մը: Կեդրոնը անուանուցաւ Արարատ Տուն 1969-ին: Անոնք շարունակեցին ընդարձակուիլ եւ 1980-ին գնեցին Eagle Rock-ի կեդրոնը:

Կարիքը հսկայ էր ու անմիջական, հետեւաբար Աստուծոյ վստահելով, դժուարութիւններ յաղթահարելով 1981-ին անոնք գնեցին 10,5 արտավար հսկայ հողամաս մը Միշըն Հիլ-գի մէջ:

Առատաձեռն բարերարներ ու նուիրեալ աշխատակորներ, իմաստուն հոգաբարձուներ, փորձառու ճարտարապետներ գործի անցան եւ 1992-ին կառուցուցան 254 անկողին հաշուող օղատուն, լուսաւոր, հանգստաւէտ ու արդիական սենեակներ՝ 400 տարեցներու ֆիզիքական շարունակական կարիքները բաւարարող: Երկյարկանի խնամակեդրոնը շրջապատուած է գեղեցիկ պարտէզներով բնութեան հրապուրիչ ծոցին մէջ: Շէնքը հարուստ է սրահներով, որոնք կ'օգտագործուին որպէս ճաշարան, գործունէութիւններու հաւաքավայր եւ այցելու դասախօսներու եւ արուեստագէտներու ելոյթներուն ծառայող հարթակ:

Արարատ Տունը օժտուած է նաեւ տարեցներու յատուկ երեք յարկանի շէնքով, «Արարատ-էսկիճեան» տպաւորիչ թանգարան-գրադարանով, Շին մատուռով, ձորճ Տէօքմէճեան կեդրոն-հանդիսասրահով եւ մեծ թիւով այցելու գոհացնող ընդարձակ ինքնաշարժի կանգառով: Հիանալի տեսարան մըն է որ կը դիմաւորէ այցելողները: Միջանի տարի առաջ շէնքը օժտուեցաւ երկրորդ յարկով, բաւարարելու համար յաւելեալ թիւով տարեցներու խնդրանքները:

Շատ ուրախ եմ, որ հաճոյքն ունիմ հակիրճ գրելու Արարատի մասին, որուն խնամակեդրոնի երկրորդ յարկի երախտապարտ բնակիչն եմ տարիէ մը աւելի: Այս յարկը աւելի փոքր է վարի յարկէն, բայց հոս կը տիրէ ուրախ ու սէր բուրոյ մթնոլորտ մը: Իւրաքանչիւր բնակիչ ունի 24 ժամ բժշկական խնամք, ըստ կարիքի: Կը հրամցուի աննդարար նախաճաշ սենեակներու մէջ, եւ հայկական համադամ ճաշ եւ ընթրիք ճաշարահներու մէջ: Երեկոցեան ժամը 8-ին թեթեւ ուտելիքներ, սուրճ, զովացուցիչ, կարկանդակ, կաթ, մածուն եւ այլն:

Առտուն կանուխ պատասխանատուները հոն են, սրահի մէջ ու բծախնդրօրէն կը զարդարեն նախ պատերը, ու ապա սեղաններուն



Վրայ մաքուր ծածկոցներ կը սփռեն, ծաղկամաններ կը ճոխացնեն վարդերով, կարծես նշանաւոր հիւրեր պիտի գան (ու այդ նշանաւոր չակերտեալ հիւրերը Արարատի բնակիչներն են): Ու ահա կը հասնի գործունէութիւններու պատասխան մեր գաղութներուն ու արժանի են ամէն չարգանքի: Երբ անոնց ընտանեկան պարագաները զիրենք կ'այցելեն, անոնց ուրախութիւնը կը հասնի իր գագաթնակէտին: Արարատ Տան մայթերուն վրայ փորագրուած են Հայոց պատմութեան կարեւոր թուականներն ու դէպքերը, իսկ շէնքերուն պատերուն վրայ կը հանդիպինք բարերարներու եւ նուիրատուներու անուններուն, ինչպէս նաեւ հոգաբարձական կազմի ատենապետներու նկարներուն:

նատուն: Բնակիչներ սկսած են ճաշարահ մտնել. Նատիան մէկ առ մէկ անոնց անունները տարով իրենց որպիսութիւնը կը հարցնէ: Միւս կողմէ բուժքույրեր միանալով բնակիչներուն, անթերի կը կատարեն իրենց պարտականութիւնները:

Գործունէութիւնները կը ներառեն գեղարուեստ, երգ, նուագ, արուեստ, Մ. Գիրքի սերտողութիւն, ընդհանուր զարգացման մրցումներ, տեղական եւ միջազգային լուրերու հաղորդում, մարզանքներ, տարեդարձներու տօնակատարութիւններ, ազգային տօներու նուիրուած ձեռնարկներ եւ այլ հետաքրքրական ելոյթներ:

Իւրաքանչիւր բնակիչ ունի օրը 24 ժամ բժշկական խնամք իր կարիքներուն համաձայն: Բոյժ քույրերու մեծամասնութիւնը շրջանաւարտ են յայտնի համալսարաններէ, ունին համապատասխան տիտղոսներ եւ հարուստ փորձառութիւն: Անոնք նուիրաբար կը ծառայեն Արարատ Տան բնակիչներուն կարիքները գոհացնելու:

Արարատ Տունը համահայկականութիւն կը բուրէ: Հոս կը գտնուին տարեցներ, որոնք երկարամեայ ծառայութիւն մատուցած

են մեր գաղութներուն ու արժանի են ամէն չարգանքի: Երբ անոնց ընտանեկան պարագաները զիրենք կ'այցելեն, անոնց ուրախութիւնը կը հասնի իր գագաթնակէտին: Արարատ Տան մայթերուն վրայ փորագրուած են Հայոց պատմութեան կարեւոր թուականներն ու դէպքերը, իսկ շէնքերուն պատերուն վրայ կը հանդիպինք բարերարներու եւ նուիրատուներու անուններուն, ինչպէս նաեւ հոգաբարձական կազմի ատենապետներու նկարներուն:

Արարատ Տունը արժանացած է բազմաթիւ մրցանակներու, պետական քննիչներու վկայութեամբ: Կեդրոնը յատուկ ուշադրութեան ենթակայ կը դարձնէ մաքրութեան եւ կարգ ու կանոնի անհրաժեշտութիւնը:

Կ'արժէ գնահատանքի մեր խօսքը ուղղել Արարատ Տան բոլոր հիմնադիրներուն, բարերարներուն, պաշտօնեաներուն, այցելող հոգեւոր մշակներու եւ նաեւ մեր կեանքը ճոխացնող արուեստագէտներուն: Երախտագիտական յատուկ զգացումներ կը տածենք Արարատ

Շար.ը էջ 17



AGBU HYE GEEN

“Facing Reality in Armenia”



Dr. Marzbed Margossian: Patterns of Unrest in Armenian History

Mr. Levon P. Thorose.: Situation in Armenia today

Mr. Harout Bronozian: Diasporan Response

Saturday, November 12, 11:00 a.m

AGBU Vatche & Tamar Manoukian Center

2495 East Mountain Street, Pasadena, California 91104

R.S.V.P. AGBU Office (626) 794-7942 or e-mail www.agbuhyegeen@gmail.com

****Lunch will be served at 1:00 p.m.****

****Donation \$25****

Dr. Marzbed Margossian

Born in Beirut, Lebanon, Marzbed specialized in the biological sciences, medicine, physiology and biochemistry. He worked as a noted journalist, writer, translator, public official, educator and school principal. His first articles appeared in Beirut's Nairi Weekly, Aztag and Zartonk Dailies. He also wrote in various Armenian publications such as Harach in Paris, Asbarez and Nor Giank in Los Angeles, Hairenik and Baikar in Boston, as well as the official publications of the Patriarchate of Jerusalem and the Troshag party. From February 1988 and the start of the Artsakh movement, he was fully engaged in all activities of diasporan solidarity and was nominated to the chairmanship of the Karabagh Committee by the Patriarch of Jerusalem. In 1991, on the occasion of his first visit to Armenia, he became a founder of the Association of Biological Scientists and was elected its vice president.

Mr. Levon P. Thorose

Graduated from UCLA with a Master of Science degree in Executive Engineering and Advanced Executive Marketing. In 2008, as CEO of Precision Sensors and Instrumentation Inc., introduced new sensor technology in Armenia. He has served Armenian humanitarian organizations, among them the first Thanksgiving Telethon to raise funds for Medical Outreach, AGBU Nairi Armenian and International School of Music and Dance, humanitarian projects in Armenia and Artsakh by Hayrenik Miyutyun of Los Angeles, the annual Science Olympiad of Armenian Engineers and Scientists of America. Levon has served with distinction in Hughes Aircraft and Raytheon companies. In 2010 he received the Medal of Honor for humanitarian services in Artsakh from President Bako Sahakyan.

Mr. Harout Bronozian

Born in Beirut, Lebanon, Harout attended the AGBU Yervant Demirdjian and Hovaguimian Manoogian Schools. Obtained a BS degree in Chemistry from the American University of Beirut, an MS degree in Petrochemicals from the University of Manchester in England and an MS degree in Chemical Engineering from USC. Harout has worked in the environmental engineering field for 20 years and for the past 16 years in the probiotics business. Since 1989, he has cultivated direct contacts with various universities and scientists in Armenia, participated in educational exchange programs, and installed 2 sewage treatment plants for James Tufenkian Hotels in Armenia. He continues to be involved in various educational and engineering projects in Armenia.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՆՆԵՐՈՒ ԱՄԲՈՂՁ ՓՈՐՁԸ՝ 10 ՄԵԶԲԵՐՄԱՆ ՄԵՋ

1. Այն մարդիկ, որոնք ձեզ տառապանք պատճառած են, նոյնքան վախցած էին, որքան դուք այժմ:
2. Մենք մեր համոզումները կը ձեռնարկենք դեռ մանուկ ժամանակ, իսկ յետոյ կը յառաջանանք կեանքի մէջ՝ վերստեղծելով այն իրավիճակները, որոնք կը համապատասխանեն մեր համոզումներուն:
3. Անցեալը ընդմիշտ հեռացած է: Ատիկա փաստ է, եւ ատոր դէմ ոչինչ կրնաս ընել: Սակայն կարելի է փոխել անցեալի վերաբերեալ միտքերը: Յիմարութիւն է, որ մենք մեզ ներկայիս պատժենք այն բանի համար, որ շատ կանուխ մէկը մեզ նեղացուցած է:
4. Մենք մեզի համար պէտք է ընտրութիւն ընենք. ազատել եւ ներել բոլորը առանց բացառութեան, յատկապէս՝ մենք մեզ: Չնայած չենք զիտեր՝ ինչպէս ներել,

- բայց պէտք է շատ ուզել:
5. Երբ մարդը կը հիւանդանայ, պէտք է իր սրտին մէջ փնտռէ, թէ որուն պէտք է ներել:
6. Այն, ինչ կը մտածենք մեր մասին, մեզի համար իրականութիւն կը դառնայ: Մեր իւրաքանչիւր միտքը մեզի համար ապագայ կը ստեղծէ:
7. Ինքն իրեն հաւանութիւն տալը եւ ընդունելը մեր կեանքին մէջ դրական տեղաշարժերու բանալին է:
8. Ինքզինք սիրել կը նշանակէ տօնել սեփական անձի գոյութեան փաստը եւ Աստուծոյ շնորհակալ ըլլալ կեանքի պարգեւին համար:
9. Այն ամէնը, որ կ'ընէք, ետ կը ստանաք:
10. Ուրիշը փոխելու համար անհրաժեշտ է նախ եւ առաջ փոխուիլ: Անհրաժեշտ է փոխել մեր միտքերուն ընթացքը:

ԱՐՄԱԻ ՕԳՏԱԿԱՐ 3ԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Իզուր չէ, որ շատ ժողովուրդներու համար արմաւը կը համարուի սուրբ ուտելիք: Անոնց փոքր քանակը ոչ միայն կը կշտացնէ, այլ նաեւ մարմնին կը պարգեւէ անհամար քանակութեամբ օգուտներ:

Օրական ուտելով ընդամէնը 3 արմաւ, մարմնին կ'ապահովէք գրեթէ բոլոր պիտանի տարրերը: Շատ բժիշկներ խորհուրդ կու տան համեղ եւ օգտակար արմաւով փոխարինել վնասակար քաղցրեղէնները:

Արմաւի օգտակարութիւնները՝

1. Մաքուր անօթներ. Արմաւը ունի մեծ չափով կալիում: Անիկա ոչ միայն կ'օգնէ սրտի բնականոն աշխատանքին, այլեւ կ'օժանդակէ մաքրելու աղտոտած անօթները: Անիկա իր հերթին կ'օգնէ խուսափելու սրտի հիւանդութիւններէն:
2. Առողջ լեարդ. Արմաւը կ'օգնէ մաքրելու լեարդը թոյներէն, կ'իջեցնէ ցերրոյի հաւանականութիւնը:
3. Լաւ տեսողութիւն. Արմաւը

- աւելի լաւ կ'ազդէ տեսողութեան վրայ, քան ստեպլինը, քանի որ անիկա ունի աւելի մեծ քանակութեամբ վիթամին A:
 4. Առողջութիւն. Եթէ կը փափաքիք առոյգ եւ ուժեղ զգալ, անհրաժեշտ է արմաւ ուտել: Ընդամէնը 3 հատիկը բաւարար ուժ կու տայ ամբողջ օրուան համար:
 5. Նիւթափոխանակութիւն. Արմաւը հիւանդի սնունդ է նիւթափոխանակութեան համար, անիկա օգտակար է ստամոքսի խանգարումներուն ժամանակ: Այս ուտելիքը շատ կարեւոր է աղետամոքսային համակարգի հիւանդութիւններու եւ նոյնիսկ՝ ստամոքսի քաղցկեղի ժամանակ:
 6. Գեղեցկութեան համար. Բարակ մազերու, չոր մորթի, կնճիռներու, ճաքճքած շրթունքներու պարագային պէտք է ուտել արմաւ:
- Աւելի լաւ է ընտրել կորիզով, մուգ եւ կնճուտ արմաւը: Անիկա պէտք է ըլլայ ամբողջական, փափուկ եւ անփայլ:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՂՁԿԱՅ ՀԱՄԱՐ ԻՆՉՈՒ ԴԺՈՒՐ Է ԱՄՈՒՍՆԱՆԱԸ

1. Խնդիրներ հօր հետ յարաբերութիւններուն մէջ: Եթէ հօր հետ վատ յարաբերութիւններուն նախաձեռնութիւնը աղջիկէն կու գայ, ատիկա կողմնակիօրէն կը մատնանշէ, որ աղջիկը ընդհանուր առմամբ քննադատական վերաբերմունք ունի մարդկութեան տղամարդկային կէսին հանդէպ:
2. Տան մէջ տղամարդկային ուժի գերակայութիւնը: Ասիկա կը նշանակէ, որ աղջիկը տղու պէս է... եւ արտաքինով, եւ մտածողութեամբ, բնաւորութեամբ, վարուելակերպով: Հաւանական փեսացուն, այս պարագային, ենթակառուցութեամբ կը զգայ տղամարդկային ուժի տիրապետութիւնը եւ հեռու կը փախչի:
3. Յած ինքնագնահատականը: Ամուսնութիւնը կրնայ ստրկութեան նման ըլլալ, իսկ ճակատա-

- գիրը բարեհաճ է եւ կը սպասէ աղջկայ անձին մէջ արմատական փոփոխութիւններու:
4. Բարձր ինքնագնահատական եւ ակնկալիքներ: Տարածուած տիպական դէպք է, երբ աղջիկը կը սպասէ սպիտակ ձիով արքայազնը: Ատիկա չափազանց փքուած կեղծեսի արդիւնքն է, իր՝ սիրուած աղջկայ վերաբերեալ պատրանքային պատկերացման:
5. Ապականած կենսական արժէքներ: Ճակատագիրը իսկական նուէր նախապատրաստած է, բայց հասունացման ժամանակաշրջանին աղջիկը ինկած է վատ ընկերական շրջապատի կամ այլասերած հանրային կարծիքի բացասական ազդեցութեան տակ: Անհրաժեշտ է կենսական արժէքներու վերագնահատում կատարել եւ ամէն ինչ միանգամայն լաւ կ'ըլլայ:

ՃԱԿԱՏԱԳՐԻ ԿԱՐՄԻՐ ԹԵԼԻ ՄԱՍԻՆ ՃԱՓՈՆԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼԸ

Հին ժամանակներէն մարդոց կը յուզէ կեանքի իմաստին հետ կապուած հարցը: Այդ որոնումներուն իբրեւ արդիւնք՝ ի յայտ եկած են բազմաթիւ ժողովրդական առասպելներ եւ փիլիսոփայական ուղղութիւններ, որոնցմէ մէկը կարմիր թելերու մասին պատմող ճափոնական առասպելն է, որ մեր կեանքի իրադարձութիւնը կը բացատրէ շատ ուժեղ թիկ եւ իրատեսական կերպով:

Փակեցէք աչքերը եւ պատկերացուցէք, որ ձեր ամբողջ մարմնին մէջէն կը հոսի արիւնը, որ հոսելով ձեր անվերջանալի արիւնատար անօթներէն եւ երակներէն, կը հասնի մարմնի բոլոր անկիւնները եւ կեանք կը պարգեւէ ձեզի: Այդ անթիւ ու անհամար արիւնատար ճանապարհներուն մէջ գոյութիւն ունի իւրաքանչիւր անօթ մը՝ սիրտէն մինչեւ ճկոյթ հասնող: Անոնք կապուած են շնորհիւ արմուկի գարկերակին: Ճկոյթը սրտի իսկական «ներկայացուցիչն է», այդ իսկ պատճառով է, որ շատ մշակութիւններու մէջ անիկա կ'օգտագործուի համաձայնելու, խոստում տալու եւ նմանատիպ գործողութիւններու համար:

Այսպէս, համաձայն ճափոնական առասպելին, այդ կապը՝ սիրտէն մինչեւ ամենափոքր մատը, չի վերջանար ճկոյթով: Ճկոյթէն դուրս կ'ելլէ անտեսանելի կարմիր թելը, որ վերջնական եւ ամուր կը կապէ ձեզ այլ մարդոց թելերուն հետ, այսինքն անոնց սիրտին հետ:

Անոնք, որոնք կապուած են այդ թելերով՝ իրարու կապուած են ճակատագիրով: Անկախ ժամանակէն, տեղէն եւ իրադարձութենէն, անոնց նախասահմանուած է հանդիպիլ, համաշխարհային իմաստով ազդել իրարու կեանքի վրայ: Կեանքի ընթացքին այդ թելը կրնայ երկարիլ կամ քարանայլ՝ դժուարեցնելով հանդիպումը կամ աւելի հեռացնելով իրարու հետ կապուած մարդիկ: Բայց անիկա երբեք չի կտրուիր:

Այդ կեանքի եւ յարաբերութիւններու կապը ծնունդ տուած է ամբողջականութեան փիլիսոփայութեան, որ կը պնդէ, որ ձեր կեանքի ուժը կը տարածուի ձեր մարմնին դուրս եւ կը կապէ ձեզ Տիեզերքի եւ անոր ուժին հետ: Կարմիր թելը՝ իրար իբրեւ մէկ ամբողջի մաս, տիեզերքի մէկ մաս հասկնալու եւ ընկալելու տարբերակն է:

Պատահական չէ, որ մենք յաճախ կը մտածենք, որ այս կամ այն մարդը ի գուր չէ, որ կայ մեր կեանքին մէջ: Եւ մենք՝ մեր կարգին՝ գուր չէ, որ կը յայտնուինք ուրիշի կեանքին մէջ: Մեր թելը կ'որոշէ մեր ճակատագիրը, ատիկա մեր գծանշուած ճանապարհն է, որ մեզ կը տանի անոնց մօտ, որոնց մենք առաւել շատ պէտք ենք, չնայած մենք չենք գիտակցիլ այդ մասին մեր ամբողջ կեանքի ընթացքին: Ճափոնացիները դարեր շարունակ հաւատացած են, որ ոչինչ պատահական է այս դժուար կեանքին մէջ:

ՎԱՏ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԵԱՆ 5 ԴՐԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ

- Ընդունիր տխրութիւնը եւ անիկա կը դադրի քեզ անհանգստացնելէ: Գիտնականները եւ հոգեբանները պարզած են, որ անոնք, որոնք հանգիստ կը վերաբերին բացասական զգացումներուն եւ կ'ընդունին զանոնք, աւելի քիչ կը տանջուին: Իսկ անոնք, որոնք կը ջղայնանան իրենց ընկուածութեան պատճառով եւ կը փորձեն ազատիլ բացասականէն ամէն զնով, աւելի մեծ ուժերու կորուստ կը զգան:
- Երբ մենք տխուր ենք, աւելի դժուար է խաբել մեզ. որքան ալ զարմանալի է, բայց տխուր մարդոց ուղեղը աւելի լաւ կ'աշխատի, մասնաւորապէս, աւելի կը զօրանան վերլուծական կարողութիւնները: Եւ այս վիճակին մէջ անոնք աւելի լաւ կը բացայայտեն ստախօսները:
- Լաւ լալը օգտակար է. բժիշկները յաճախ կ'ըսեն՝ սիրտը արցունք կը թափէ: Ատիկա կը նշանակէ, որ եթէ դուք կը պահէք արցունքները, կը

- սպաննէք ձեր «շարժիչ»ը: Բացի այդ, մարդոց մեծամասնութիւնը գիտէ, որ արցունքներէն յետոյ հոգին կը հանգստանայ, չնայած, որ իրավիճակը չի փոխուիր: Այդ պատճառով, հոգեբանները կը թելադրեն չպահել լացը: Տարբեր զգացումները կարեւոր են. Հոգեբանները պարզած են, որ մարդիկ, որոնց տրամադրութիւնը օրուան ընթացքին կը փոխուի տխուրէն ուրախի՝ աւելի ընկղմած կ'աշխատին: Ատիկա կը խօսի զգացմունքային փոփոխութեան կարեւորութեան մասին: Բացասական փորձը մարդիկ կը դրդէ գործողութիւններու եւ կը ստիպէ անոնց ըլլալ աւելի հաւաք:
- Տխրութիւնը չ'ազդեր գիտակցութեան վրայ. Կարելի է աշխատիլ վատ տրամադրութեամբ: Այո: Հոգեբանները պարզած են, որ վատ տրամադրութեամբ աշխատանքի գացող մարդիկ աւելի արդիւնաւէտ կ'աշխատին քան՝ անոնք, որոնք լաւ տրամադրութեամբ կ'աշխատին:

ՀԱՃԵԼԻ ՄԱՐԴՈՅ ՏԱՍԸ ԿԱՆՈՆ

- Սովորութիւններ, որոնց շնորհիւ կարգ մը մարդիկ հաճելի կը թուին բոլորին, կամ դիւրութեամբ կրնան նուաճել բոլորին համակրանքը.
- Կը ստեղծեն դրական տրամադրութեամբ թիւն, որմով կը վարակեն միւսները,
- Բարեհոգի են,
- Կարողութիւն ունին ուշադիր լսելու ուրիշները,

- Կը տիրապետեն իրենք իրենց,
- Կը պահպանեն հանգստութիւնը,
- Միշտ բաց են շփման համար եւ անկանխակալ են,
- Անոնց դէմքին միշտ ժպիտ կայ,
- Կրնան շատ չխօսիլ,
- Դանդաղ չեն,
- Կանոնաւոր կերպով բարեգործութեամբ կը զբաղին:

SYRIAN ARMENIAN RELIEF FUND
Save Support Sustain
 Syrian Armenian Relief Fund
 P. O. Box 1948
 Glendale, CA 91209-1948
 www.syrianarmenianreliefund.org

ՀՖՖ ՆԱԽԱԳԱՀ.

«ՈՐՔԱՆ ԷԼ ՄԱՐԶԻՉԸ ԶԱՆԿԱՆԱՅ, ԹՈՅԼ ՉԵՄ ՏԱՅ ԵՈՒՐԱ ՄՈՎՍԻՍԵԱՆԻՆ ՀՐԱԴԻՐԵԼ ՀԱՒԱՔԱԿԱՆ»

«Հայաստանի հաւաքական չէն կարող հրաւիրուել Եւրոպա Մովսիսեանը եւ Ռոբերտ Արզումանեանը: Ինչքան էլ մարզիչը ցանկանայ հրաւիրել նրանց, ես թոյլ չեմ տալիս»:



Այս մասին յայտարարել է ՀՖՖ նախագահ Ռուբէն Հայրապետեանը, որը վանաձորի ֆուտպոլի ակադեմիայի բացման արարողութիւնից յետոյ պատասխանել է լրագրողների հարցերին, վանաձորից փոխանցում է NEWS.am Sport-ի թղթակիցը:

«Հայաստանի հաւաքականի գլխավոր մարզիչի ընտրութիւնը կանգ է առել Արթուր Պետրոսեանի վրայ, քանի որ նա այս տարիների ընթացքում բաւական լաւ մարզչական փորձ է ձեռք բերել, ունի է PRO կարգ: Բացի այդ, Արթուր Պետրոսեանը եղել է մեր հաւաքականի առաջատար ֆուտպոլիստներից մէկը եւ ես գտնում եմ, որ ժամանակն է՝ նա գլխավորի մեր հաւաքականը»:

Ես Արթուր Պետրոսեանին առաջարկեցի քառամեայ պայմանագիր, բայց նա հրաժարուեց: Նրա հետ կնքել ենք երկու տարուայ պայմանագիր: Արթուրը նշեց, որ որ ընտրական փուլի աւարտից յետոյ նոր կը վերանայինք պայմանագիրը:

Այն ֆուտպոլիստները, որոնք կը խախտեն Հայաստանի հաւաքականի կարգուկանոնը, վնաս կը տան մեր թիմին, չեն հրաուրուել: Բացառութեամբ այդպիսի ֆուտպոլիստների, հաւաքականի մարզիչը կը հրաւիրի բոլոր նրանց, ում տուեալ պահին կը համարի անհրաժեշտ: Իսկ իմ նշած կանոնները խախտող ֆուտպոլիստները հաւաքական չեն հրաւիրուել իմ անձնական ցանկութեամբ: Ես՝ որպէս ֆեդերացիայի նախագահ, կարող եմ թոյլ չտալ նման ֆուտպոլիստներին հանդէս գալ ազգային հաւաքականում, որքան էլ թիմի գլխավոր մարզիչը կամենայ: Հայաստանի հաւաքական չէն կարող հրաւիրուել Եւրոպա Մովսիսեանը, Ռոբերտ Արզումանեանը: Ինչքան էլ մարզիչը ցանկանայ հրաւիրել նրանց, ես թոյլ չեմ տալիս:

Ինչ վերաբերում է Միթիարեանին, ես չգիտեմ՝ «Մանչեսթեր Եունայթեդ» գլխավոր մարզիչի գլխում ինչ կայ, ինչ է մտածում, ինչպէս է մտածում, որ Հենրիխին չի խաղացնում: Միթիարեանն ինքն էլ չգիտի. ես հարցրել եմ, թէ ինչն է պատճառը: Նա լաւ մարզավիճակում է, լաւ մարզում է, բայց ինչու չի խաղացնում, պատճառը չգիտի ոչ ոք»,- ասել է Ռուբէն Հայրապետեանը:

ԱՐԱՍ ՕԶԲԻԼԻՍԸ ՎՆԱՍՈՒԾՔ Է ՍՏԱՅԵԼ

Թուրքական «Բեշիկթաշի» ֆէյսբուքեան պաշտօնական էջը տեղեկատուութիւն է տարածել, որ Հայաստանի ազգային հաւաքականի կիսասպաշտպան Արաս Օզբիլիսը վնասուածք է ստացել: Ինչպէս ՀՖՖ պաշտօնական կայքին տեղեկացրեց անձամբ Արաս Օզբիլիսը, վնասուածքը բաւականին լուրջ է: Խախտուել է Արաս Օզբիլիսի ուսայտը:



Նա վիրահատութեան է ենթարկուել: ՀՖՖ Հաւաքական թիմերի բաժինը դեռեւս ակումբից չի ստացել պաշտօնական տեղեկութիւն Արաս Օզբիլիսի առողջական վիճակի մասին: Օզբիլիսի ապաքինման ժամկէտները դեռ յայտնի չեն:

ՏԻԳՐԱՆ Վ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԸ՝ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ՓՈԽԱԽՈՅՄԱՆ

Միջազգային օլիմպիական կոմիտէն դոպինգ թեստի արդիւնքների յայտնի դառնալուց յետոյ որակազրկել է պելաուուս Ժանրորդ Անդրեյ Ռիբակովին, որ 85 կգ քաշում արծաթէ մետալակիր է դարձել Պեկինի օլիմպիական խաղերում:

Այս որոշումը նշանակում է, որ Հայաստանի ներկայացուցիչ Տիգրան Վ. Մարտիրոսեանը, որ պրոնգէ մետալակիր էր դարձել, կը ստանա արծաթէ մետալը:

«ՄԱՆՉԵՍԹԵՐ ԵՈՒՆԱՅԹԵԴՍԻ» ԵՐԿՐՊԱԳՈՒՆԵՐԸ ԿԸ ՊԱՀԱՆՁԵՆ ՄՈՒՐԻՆԻՈՅԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

«Մանչեսթեր Եունայթեդ» երկրպագուները թիմի պորտուգալացի գլխավոր մարզիչ Ժոզէ Մուրինիոյի դէմ բողոքի գործողութեան համար գումար են հաւաքում: Նախաձեռնութեան մասին հաղորդաբովութիւնները տարածուած են Թուրքիոյում:

Ֆանատները մտադիր են թիմի յառաջիկայ հանդիպման ժամանակ պատուիրել ինքնաթիռի թռիչք Մանչեսթերի «Օլդ Տրաֆորդ» ստադիոնի վրայ: Ինքնաթիռից կախուած կը լինի պատառ՝ «Մուրինիո, հեռացիր» գրութեամբ:

Անգլիայի առաջնութեան 10 տուրից յետոյ «Մանչեսթեր Եունայթեդ» 15 միւսերով 8-րդ տեղում է եւ առաջատարներ «Մանչեսթեր Սիթիին», «Արսենալին» ու «Լիվերպոլին» զիջում է 8-ական միւսերով:

ՏԵՅՎԻՏ ՎԻԼԻԱ. «ԵՐԱԶՈՒՄ ԵՄ ՎԵՐԱԴԱՈՒՆԱԼ ՄՊԱՆԻԱՅԻ ՀԱՒԱՔԱԿԱՆ»

«Վալենսիայի» եւ «Բարսելոնայի» նախկին յարձակուող Տէյվիտ Վիլեան խոստովանել է, որ երազում է Սպանիայի ազգային հաւաքական վերադառնալու մասին:



«Առջեւում ՄԼՍ-ի կարեւոր հանդիպումներ են, իսկ ազգային հաւաքականի մարզիչը կազմը պէտք է հրապարակի յաջորդ Ուրբաթ: Ես լաւագոյնի յոյս ունեմ, իմ երազանքն է դարձեալ խաղալ ազգային թիմում», - Տէյվիտ Վիլեայի խօսքը մէջբերում է ՄԼՍ-ի պաշտօնական կայքը:

«Նիւ Եորք Սիթիում» հանդէս եկող 34-ամեայ Վիլեան Սպանիայի հաւաքականից հրաւէր չի ստացել 2014 թուականից: Սպանիայի թիմի գլխավոր մարզիչ Խոսէ Լոպետեգին յայտարարել էր, որ չի բացառում Վիլեայի վերադարձը:

ՉԻԼԻԻ ՖՈՒՏՊՈԼԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆՈՒՄ ՆՈՐ «ԿԱՆՏՈՆԱ» Է ՅԱՅՏՆՈՒԵԼ

Զիլիական «Աուդաքս Իտալեանա» թիմի յարձակուող Սեբաստիան Պոլը հնարաւոր է յայտնուել բանտում:



Արժենտինացի 28-ամեայ խաղացողն առաջնութեան խաղին նախ լեզուակոուել է բռնուել երկրպագուի հետ, ապա բարձրացել տրիբունա եւ ոտքով հարուածել: Վերջինս հայց է ներկայացրել դատարան եւ պահանջել ֆուտպոլիստին պատժել առաւելագոյն պատժաչափով՝ այսինքն, ազատազրկել երկու տարով:

Տեղի լրատուամիջոցներն անմիջապէս յիշեցրել են 21 տարի առաջ Անգլիայում տեղի ունեցած նման միջադէպը, որի ժամանակ «Մանչեսթեր Եունայթեդ» յարձակուող Էրիկ Կանտոնան ոտքով հարուածել էր «Քրիստալ Փելասի» երկրպագուին: Այն ժամանակ ֆրանսացի ֆուտպոլիստն որակազրկուել էր ընդամէնը 8 ամսով:

ԱՐԱՐԱՏ ՏՈՒՆԸ

Շարունակուած էջ 15-էն

Տան հոգաբարձութեան նախկին ատենապետ, իրաւաբան Ժոզէֆ Կանիմեանի, ներկայ ատենապետ Մայքըլ Սիւրմէեանի, ինամակեղորոնի երկարամեայ նախկին վաստակաշատ տնօրէնուհի Տիկ. Մարկո Պապիկանի եւ ներկայ ժրջան տնօրէնուհի՝ Տիկ. Մարկարիթա Քէշիշեանի եւ հիւանդապահուհիներու տնօրէնուհի՝ Տիկ. Սիլվան Երանեանի հանդէպ:

Արարատ Տան գոյութիւնը մեր գաղութէն ներս պատիւ կը բերէ հայութեան: Կ'արժէ թիկունք կանգնիլ եւ աստարել անոր վերելքին: Արարատ Տունը Mission Hills-ի եւ նաեւ Eagle Rock-ի կեդրոններով իր դռները լայն բացած է

տարեցներու եւ սիրով ու պատասխանատուութեան բարձր գիտակցութեամբ անխտիր կը ծառայէ բոլորին:

Վերջացնելէ առաջ պարտք կը զգանք մէջբերել Արարատ Տան առաքելութեան Հաւատոյ Հանգանակը. «Արարատ Տան գոյութեան նպատակն է հայթայթել հայ տարեցներու իւրաքանչիւր միջավայր մը, առանց նկատի ունենալու անոնց նիւթական վիճակը, ու նաեւ սատարելու հայկական ժառանգութեան եւ մշակութային արժէքներու պանծացման ամերիկեան այս հիւրընկալ հողի վրայ»:

Աղօթքս է, որ Աստուած մեծապէս օրհնէ ու իր բազուկներով պաշտպանէ մեր բոլորին սիրելի Արարատ Տունը:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՇՈՂԻ ՇԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՇԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՇԵՆՆԱՅԵՆԵԼ (626) 797-7680

ԱՍՏՂԵՐԸ ԻՆՉ Կ'ԸՍԵՆ

ԽՈՅ **Մարտ 21-Ապրիլ 19**
Յուզաբերած յոյսի արտայայտությունները կ'արտայայտեն ունեցած արժեքները եւ նախապատուութիւնները: Ընտանեկան յարկէր ներս շատ ուրախ ու երանելի ըլլալու: շատերու նախամը կը գրգռես: Կարճ ճամբորդութիւն մը կը ծրագրես: Բախտաւոր թիւերդ են: 2,15,23,29,33

ՅՈՒԼ **Ապրիլ 20-Մայիս 20**
Անորոշ վիճակ մը ունիս եւ չես կրնար որոշում առնել: Պէտք է անպայման հաղորդակցիս փորձառուի մը հետ եւ հետեւիս թելադրանքներու: Կը փորձես գաւակներդ հեռու պահել վարակումներէ՝ վախճալով անոնց հետեւանքներն: Բախտաւոր թիւերդ են: 9,11,27,28,31

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ **Մայիս 21-Յունիս 20**
Քեզի տրուած գործերը կատարելագործելու մեծ յատկութիւն ունիս, որու պատճառաւ շատ կը սիրուիս եւ կը փնտռուիս: Սկզբունքներդ մի փոխեր դուն քեզ ընդունուած զգալու համար, շրջանակդ փոխել եւ դուն քու շնորհքներդ բարելաւել: Բախտաւոր թիւերդ են: 7,11,24,31,32

ԽԵՑԳԵՏԻՆ **Յունիս 21-Յուլիս 22**
Անպարկեշտ արարքներով կը զգուցնես սիրելի մը որու դուն պէտքը ունիս: Պէտք է զգաստանաս ըրած սխալներուդ եւ ներողամտութիւն խնդրես: Կալուած մը զնելու նպատակիդ հասնելու համար, գործի ժամերդ աւելցնելու ես: Բախտաւոր թիւերդ են: 1,12,20,30,34

ԱՌԻԺ **Յուլիս 23-Օգոստոս 22**
Գովասանք կը սպասես բանի մը համար որու մէջ դուն ձեռք անգամ չես ունեցած: Սուտ առատածեռն մի ձեւացներ ըլլալ, եթ ունիս՝ իսկապէս բաժնեկցիր: Անցեալի ցաւալի դէպքերէն ձերբազատուելու ես եւ նայիս դէպէ ապագան: Բախտաւոր թիւերդ են: 11,24,25,31,32

ԿՈՅՍ **Օգոստոս 22-Սեպտեմբեր 22**
Շատ կը սիրես օգտակար դառնալ եւ ծառայութիւն մատուցանել: Նոր գործի առաջարկ մը քեզ շփոթի պիտի մատնէ: Դեռաւոր անձի մը մահուան լուրը քեզի զանգակ պիտի ըլլայ դասաւորելու կեանքդ եւ նախապատուութիւններդ: Բախտաւոր թիւերդ են: 3,14,25,34,35

ԿՇԻՈՔ **Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22**
Անձի մը գործի ընդունուիլը քու բարեխօսութենէդ կախեալ է, անկեղծ արտայայտուել: Թերեւս կատարած գործդ անճշտ եւ փոքր երեւի, սակայն վստահ գիտցիր թէ քու միջոցաւ կատարուածը մեծ արժեքներ կը ներկայացնէ: Բախտաւոր թիւերդ են: 14,21,26,30,31

ԿԱՐԻԾ **Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21**
Բարոյականի տէր անձ մըն ես եւ օրէնքներդ եւ սկզբունքներդ երբէք չես փոխեր եւ այդ պատճառով քննադատական կեցուածք կը ցուցաբերես խորհելով թէ դուն միշտ շիտակ ես: Նիւթական գետնի վրայ լաւ յաջողութիւններ պիտի գտնես: Բախտաւոր թիւերդ են: 4,13,22,24,30

ԱՂԵՂՆԱՒՈՐ **Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21**
Ընտանիքիդ շատ մօտ անձ մը նեղութեան մէջ է եւ կը կարօտի ծայրահեղ նուիրումիդ եւ զոհաբերութեանդ: Գիտնալով հանդերձ որ շատ կը հոգնիս՝ կը շարունակես աշխատիլ անթիւ ժամեր, ապահովելու ընտանիքիդ բարեկեցութիւնը: Բախտաւոր թիւերդ են: 15,21,31,34,35

ԱՅԾԵՂՋԻՐ **Դեկտեմբեր 22-Յունուար 19**
Կեանքիդ մէջ շատ փնտռողներ ունեցած ես: Երբեմն կը փնտռես միւթական բաներ եւ երբ չտիրանաս անոնց, կը յուսահատիս: Սրտիդ մէջ կան պահուած բաներ որոնք չես ուզեր բաժնեկցիլ կողակիցիդ հետ: Մեծ հաւաքի մը ներկայ պիտի ըլլաս: Բախտաւոր թիւերդ են: 7,16,24,29,33

ԾՈՎԱՆՈՅՇ **Յունուար 20-Փետրուար 18**
Անիրաւ տեղ կ'ամբաստանուիս եւ կ'ուզես որ մէկը դատդ պատշպանէ եւ անունդ մաքուր մնայ: Վիճաբանութիւնով իրաւունքդ չես կրնար պաշտպանել, իրաւագէտ եւ խորամանկ եղիր ու կողակիցիդ վստահէ այս հարցով: Մի մտահոգուիր անպէտք բաներու համար: Բախտաւոր թիւերդ են: 9,17,25,29,31

ՉՈՒԿ **Փետրուար 19-Մարտ 20**
Յարաբերութիւնդ նորոգելու ես բարեկամի մը հետ եւ առիթը գտնելու ես ուրախ մթնոլորտ ստեղծելու տանդ յարկէն մերս: Շիտակ եւ անկեղծ անձը ընտրած ես կեանքդ անոր հետ շարունակելու համար, մի վախճար ծրագրելու ապագադ անոր հետ: Բախտաւոր թիւերդ են: 3,13,24,27,29

ՎԱՆԱՁՈՐ - ՔԻՄՊՐՈՍԻ ԶԱՐՑՈՎ

Շարունակուած էջ 13-էն

Քը: Պետութիւնը եւ մանաւանդ Վանաձորի քաղաքապետարանը անհրաժեշտ է որ լրջօրէն զբաղուին այս հարցով եւ դրական լուծումներ գտնեն: Կարելի է բնականաբար ներդրողներ գտնել եւ ծրագրել իրականացնել, որոշ գրական պայմաններ առաջարկելով ներդրողներուն: Տիկ. Իրինա Սարիբէքեանը կ'առաջարկէ որ «պետութիւնը երաշխաւորի վանաձոր-Քիմպրոսի համար կենդանիներու գների սառեցում հինգ տարուայ համար եւ այդ բեռն իր վրայ վերցնի, իսկոյն կը գտնուեն ներդրողներ: Եւ դա պետութիւնը պէտք է անի ոչ թէ բիզնեսին աջակցելու, այլ վանաձոր քաղաքում արտագաղթը կանգնեցնելու համար»: Այլապէս, կ'ըսէ ան, «վանաձորում բնակուելու, աշխատելու եւ տարրական կենսամակարդակ ապահովելու հնարաւորութիւն կուենան 30-ից 40 հազար մարդ»:

Ահազանգային է կացութիւնը, բայց լուծումը կայ մասամբ դարմանելու վէրքը: Հայաստանի Հանրապետութեան պետական Այրերը ամենայն լրջութեամբ պէտք է մօտենան այս հարցին: Չմոռնանք որ այս հարցը ռազմավարական շատ մեծ նշանակութիւն ունի եւ մանաւանդ աւելիով պիտի ունենայ ապագային: Կարելի է աժանոց «ոչ» մը ըսել եւ «ներդրողներ եթէ ըլլան» ի խօսքով փակել հարցը: Վանաձորի գոյութիւնը ապահովելու, վանաձորցիներուն արժանապատիւ կենցաղ ապահովելու եւ ընդհանրապէս Հայաստանի ապահովութեան եւ տնտեսական զարգացման համար շատ մեծ ներդրում կրնայ ունենալ վանաձորի Քիմպրոսը: Մանաւանդ՝ ժողովուրդը կը մնայ հոն:

Աւելին: Վանաձորը 1987-ի երկրաշարժէն մեծապէս վնասուած եւ տուժած ըլլալուն պատճառով, առաւել եւս իրաւունք ունի ակնկալելու որ ՀՀ անրապետութեան իշխանութիւնները քայլ մը եւս առաջ երթալով նախապատուութիւնը տան վանաձորի վերագարդման եւ վանաձորցիներուն տակաւին մղկտացող ցաւը մասամբ դարմանեն: Այս՝ վանաձորցիներուն իրաւունքն է: Վերջ: Վանաձորի ԱԺ Պատգամա-

ւորները, քաղաքապետարանի նորնտիր Աւագանիներն ու քաղաքապետը մեծ պատասխանատուութիւն ունին այս հարցին մէջ:

Եթէ ես, որպէս «սփիւռքահայ» մտահոգուած եմ վանաձորի հայաթափութեամբ եւ զիտեմ որ կան անոր առաջը առնելու կարելիութիւնները, վստահ եմ որ վանաձորի քաղաքապետը շատ աւելին պիտի ընէ գործնականապէս վանաձոր-Քիմպրոսը վերաշխուժացնելու: Ես կը հաւատամ եւ վստահ եմ որ եթէ վանաձորի Աւագանին եւ քաղաքապետը ի'րապէս ուզեն այդ Քիմպրոսը վերաշխուժացնել, անպայման կը յաջողին պետական միջոցներով եւ կամ այլապէս ներդրողներ գտնելով լուծել հարցը:

Ուրեմն, այսօր, վանաձորի Աւագանին եւ քաղաքապետին «խնդրելու պէս կը պահանջեմ, կամ պահանջելու պէս կը խնդրեմ» որ այս հարցին բարուք լուծում մը գտնեն:

Յաջորդ Հայաստան - վանաձոր այցելելուս, պիտի հանդիպիմ քաղաքապետին եւ պիտի ստուգեմ Քիմպրոսի վիճակը: Կ'ուզեմ հաւատալ որ ամէնքս ալ ուրախ պիտի ըլլանք:

Մեծ անձկութեամբ կը սպասեմ վանաձոր-Քիմպրոսի լաւ լուրերուն:

Ծանօթ.- Հոկտեմբերին Հայաստան այցելութեանս ժամանակ վանաձորի մէջ այցելեցի Թիւ 34 Մանկապարտէզը: Ճաթրտած տանիքով, մզլոտած պատերով, բոլորովին վատառողջ պայմաններու մէջ, առանց ջերուցումի (ներողութիւն, պզտիկ վառարան մը ունէին որ փայտ վարելով կրնար շուրջի քանի մը քառ. մեթրը տաքցնել, ծուխը անշուշտ սենեակին մէջ կը մնար ...), 3 -7 տարեկան 85 մանուկներ կ'ուսանին հոն: Եթէ Ամերիկայի մէջ այդ պայմաններուն տակ շուրջ կապես, քեզ կը բանտարկեն: Ամէն ճիգ պիտի ընեմ որպէսզի բարերար մը կամ բարերարներ գտնեմ այդ մանկապարտէզը նորոգելու (արդէն կարասինբու բարերարը գտած եմ): Կ'ուզեմ հաւատալ որ Թիւ 34 Մանկապարտէզը մինջեւ վերանորոգուի, Քիմպրոսը պիտի սկսի իր նոր արտադրութիւնները շուկայ հանել ...

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԽԱԶԻԿ ԿԱՐՍԵՒԱՆԵԱՆԻ մահուան առթիւ հետեւեալ անձերը իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի տիկնոջ եւ ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տօքթ. եւ Տիկ. Համբիկ եւ Նայրա Սարաֆեաններուն: Այս առթիւ փոխան ծաղկեպսակի կ'ըլլան հետեւեալ նուիրատուութիւնները «Մասիս» շաբաթաթերթին:

- Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Քաթիա Խոտանեան \$100
- Տէր եւ Տիկ. Գաբրիէլ եւ Մարիա Մոլոյեան \$100
- Տէր եւ Տիկ. Խաչիկ եւ Ժենիա Քէշիշեան \$100
- Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Սեդա Խոտանեան \$100
- Տէր եւ Տիկ. Վահէ եւ Մարո Աջապահեան \$100
- Տէր եւ Տիկ.Վարդան եւ Ծովիկ Քէօրողեան \$100
- Տէր եւ Տիկ. Վարդան եւ Կարինէ Տէփոյեան \$100
- Տէր եւ Տիկ. Միհրան եւ Թամար Խաչատուրեան \$100
- Տէր եւ Տիկ. Թադէոս եւ Նորա Քէօրողեան \$100
- Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Միմա Կիրակոսեան \$100
- Տէր եւ Տիկ. Սուրէն Խուզանեան \$100
- Տիար Մինաս Մութաֆեան \$100
- Տիար Ալպեր Մինասեան \$50

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

ՄԱՐԱԶԴ



ՈՎՍԱՆՆԱ ՉԱՐԸՔԵԱՆ
(1927-2016)

Խոր ցաւով կը գուժենք մեր սիրեցեալ մօր, մեծ մօր, հօրաքրոջ եւ հարազատին ՈՎՍԱՆՆԱ ՉԱՐԸՔԵԱՆի մահը որ պատահեցաւ Ուրբաթ, 28 Հոկտեմբեր, 2016ին կէսօրէ ետք ժամը 3:33ին, յետ երկարատեւ հիւանդութեան:

Հանգուցեալի եկեղեցական կարգը տեղի պիտի ունենայ, Ուրբաթ Նոյեմբեր 4, 2016, ժամը կէսօրուայ ժամը 12:00ին Ս. Պետրոս Հայց. Առաքելական եկեղեցոյ մէջ, որմէ ետք թաղման կարգը տեղի պիտի ունենայ ժամը 2:00ին Հոլիվուտ Հիլզ Ֆորէսթ Լոն գերեզմանատան մէջ:

- Սգակիրներ՝
- Զաւակները՝
- Տիար Ստեփան Չարըքեան
- Տէր եւ Տիկ. Օննիկ եւ Նորա Հաւանճեան եւ զաւակունք
- Տէր եւ Տիկ. Գօգօ եւ Սոնա Չարըքեան եւ զաւակունք
- Տէր եւ Տիկ. Վարուժան եւ Սիւզի Չարըքեան եւ զաւակունք
- Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Արմենակ եւ Հայկանուշ Պոյամեան եւ զաւակունք
- Քոյրը՝ Այրի Տիկ. Ազնիւ Պալեան (Թորոնթօ, Գանատա)
- Տէր եւ Տիկ. Ազատ եւ Սոնա Պոյամեան եւ զաւակունք
- Տէր եւ Տիկ. Յարութ եւ Լուսին Պոյամեան եւ զաւակունք
- Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Արտեմիս Մոմճեան եւ զաւակունք (Ֆրէզնօ)
- Այրի Տիկ. Աստղիկ Խաչատուրեան եւ զաւակունք
- Օրդ. Քնարիկ Պոյամեան
- Տէր եւ Տիկ. Գօգօ եւ Սիլվա Եսայեան եւ զաւակունք
- Տէր եւ Տիկ. Ստեփան եւ Զապէլ Չարըքեան
- Տիար Գրիգոր Չարըքեան
- եւ համայն Չարըքեան, Հաւանճեան, Պոյամեան, Պալեան, Մոմճեան, Խաչատուրեան, Եսայեան ընտանիքները, հարազատները եւ բարեկամները:

ՄԱՐԱԶԴ



ՌՕԶԻՆ ՊԱՊԱՅԵԱՆ
Ծնեալ Ապրիլ 4, 1921-ին, Հայէպ, Սուրիա

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրեցեալ մօր, մեծ մօր, մօրաքոյրին, հօրաքոյրին, եւ հարազատին՝ Ռօզին Պապայեանի մահը որ պատահեցաւ Շաբաթ, Հոկտեմբեր 29, 2016ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Շաբաթ, Նոյեմբեր 12, 2016, առաւօտեան ժամը 9:00 ին, Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան Old North Church մատրան մէջ, ապա թաղումը՝ նոյն գերեզմանատան մէջ:

- Սգակիրներ՝
- Զաւակները՝ Տոքթ. եւ Փրոֆ. Սարգիս եւ Սիլվա Գարայեան
- Տէր եւ Տիկ. Ներսէս եւ Հերմին Պապայեան
- Տէր եւ Տիկ. Արա եւ Սոնիա Պապայեան
- Թոռները՝ Տոքթ. եւ Տիկ. Խաչիկ եւ Զելա Գարակչօգեան
- Պրն. Երուանդ Ա. Պապայեան
- Մեթր. Երուանդ Ն. Պապայեան
- Օրդ. Թալին Պապայեան
- Դոկտ. եւ Տոքթ. Ալեք եւ Թամար Պապայեան
- Ծոռները Թամար եւ Փաթիլ Գարակչօգեան
- Նայիրի եւ Թաթիանա Պապայեան
- Գրիստօֆըր Պապայեան
- Քրոջ զաւակները
- Տէր եւ Տիկ. Հրայր եւ Աստղիկ Թէճիրեան եւ զաւակները
- Տէր եւ Տիկ. Զօհրապ եւ Յասմիկ Թէճիրեան եւ զաւակները
- Տաքրոջը զաւակը
- Պրն. Խաչիկ Պապայեան
- Եղբօր Թոռնիկը
- Տէր եւ Տիկ. Էտի եւ Թալին Ամրոյեան եւ զաւակները
- եւ համայն Պապայեան, Գարայեան, Թէճիրեան, Գապագեան, Ուստազարայեան, Պասմաճեան, Սալպաշեան, Սիւմպիլեան, Գարակչօգեան, Իւթիւճեան, Պէլիքեան, Պարութեան, Սարտարեան, Տէմիրճեան, Գասպեան, Տիգրիճեան եւ համայն հարազատներն ու բարեկամները:

Հանգուցեալի չիշատակին, փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել Հայաստանեայց Եկեղեցոյ Արեւմտեան Թեմի Սրբոց Առաքելոց Եկեղեցոյ Երուանդ Պապայեան Շաբաթօրեայ Դպրոցին, Հայ Այնթապցիներու Մշակութային Միութեան եւ Արարատ Տարեցներու Տան:

ՅԱԲԱԿՑԱԿԱՆ

Տիկ. ՌՈՋ ՊԱՊԱՅԵԱՆի մահուան տխուր առիթով «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնն ու անձնակազմը իրենց խորագգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի զաւակներուն եւ համայն ընտանեկան պարագաներուն:

ՅԱԲԱԿՑԱԿԱՆ

ՄԱՐԹԻՆ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆի մահուան առիթիւ Տէր եւ Տիկ. Տիգրան Սարաֆեան իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Յարութ եւ Լուսին Պոյամեաններուն:
Առ այդ 50 տոլար կը նուիրէ «Մասիս»ին:

ՅԱԲԱԿՑԱԿԱՆ

ԼԻՏԻԱ ՏԷՐ ԵՂԻԱՅԵԱՆի մահուան առիթիւ Տէր եւ Տիկ. Տիգրան Սարաֆեան իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Դոտկ. Կարպիս Տէր Եղիայեանին:
Առ այդ 50 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:

ՅԱԲԱԿՑԱԿԱՆ

ԳՐԻԳՈՐ ՄԱԼՃԵԱՆի մահուան տխուր առիթով Նոր սերունդ Մշակութային Միութեան վարչութիւնն ու անդամները իրենց խորագգաց վիշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի այրիին, զաւակներուն եւ ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Մինաս եւ Սոնիա Մալճեանին:

ՄԱՐԱԶԴ



ՆԱՐԵԿ ՓԱԴԱԴԱՆԵԱՆ
Ծնած 1997, Հայաստան Չարենց Աւան

Խոր ցաւով կը գուժենք մեր զաւակին, թոռնիկին եւ հարազատին ՆԱՐԵԿ ՓԱԴԱԴԱՆԵԱՆի նահատակութիւնը որ պատահեցաւ Սեպտեմբեր 16, 2016ին Արցախի մէջ:

- Սգակիրներ՝
- Ծնողքը Գառնիկ եւ Ալիս Փադաղանեան
- Մեծ հայրը՝ Յակոբ Փադաղանեան
- Հօրեղբայրը՝ Նորիկ Փադաղանեան եւ համայն հարազատները Հայաստանէն եւ Կլենտէյլէն:

ՅԱԲԱԿՑԱԿԱՆ

Տիկ. ԱՐՓԻՆԷ ԳՈՃԱՅԵԱՆ ԳԼՐՔՈՉԵԱՆի մահուան առիթիւ ՀՄՄ-ի Տիկնաց Միութիւնը խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն մասնաւորաբար ԸնկՏ. Սիմա Կիրակոսեանին:



ARMENIAN COUNCIL OF AMERICA
Political Action Committee Endorsements

November 8, 2016 Elections



UNITED STATES PRESIDENT

Hillary Clinton

UNITED STATES SENATE



Kamala D. Harris California, Mark S. Kirk Illinois, Chris Van Hollen Maryland, Chuck Schumer New York, Patrick Leahy Vermont, Russ Feingold Wisconsin

UNITED STATES HOUSE OF REPRESENTATIVES

CALIFORNIA



Jeff Denham CA - CD 10, Jackie Speier CA - CD 14, Jim Costa CA - CD 16, Anna Eshoo CA - CD 18, Devin Nunes CA - CD 22, Judy Chu CA - CD 27, Adam Schiff CA - CD 28, Tony Cardenas CA - CD 29, Brad Sherman CA - CD 30, Edward Royce CA - CD 39

ILLINOIS

MASSACHUSETTS

NEW YORK

MICHIGAN



Daniel Lipinski IL - CD 3, Janice Schakowsky IL - CD 9, Robert Dolt IL - CD 10, Jim McGovern MA - CD 2, Nikki Tsongas MA - CD 3, Joseph Kennedy MA - CD 4, Kathrine Clark MA - CD 5, Carolyn Maloney NY - CD 12, Eliot Engel NY - CD 16, Sander Levin MI - CD 9, John Conyers MI - CD 13

NEVADA

NEW JERSEY

RHODE ISLAND

CALIFORNIA STATE SENATE



Dina Titus NV - CD 1, Danny Tarkanian NV - CD 3, Crescent Hardy NV - CD 4, Christopher Smith NJ - CD 4, Scott Garrett NJ - CD 5, Frank Pallone NJ - CD 6, David Cicilline RI - CD 1, Jim Langevin RI - CD 2



Scott Wiener SD 11, Scott Wilk SD 21, Ling Ling Chang SD 29

CALIFORNIA STATE ASSEMBLY



Mark Levine AD 10, Ken Vogel AD 12, Mae Torlakson AD 14, Cathrine Baker AD 16, David Chiu AD 17, Adam Gray AD 21, Jim Patterson AD 23, Kansen Chu AD 25, Joaquin Arambula AD 31



Cheryl R. Brown AD 47, Raul Bocanegra AD 39, Marc Steinorth AD 40, Chris Holden AD 41, Ardy Kassakhian AD 43, Matt Dababneh AD 45, Ed Chau AD 49, Richard Bloom AD 50, Miguel Santiago AD 53



Ian C. Calderon AD 57, Christina Garcia AD 58, Eric Linder AD 60, Anthony Rendon AD 63, Mike A. Gipson AD 64, Young Kim AD 65, David Hadley AD 66, Thomas E. Krouse AD 76



Alan Nakanishi SD 5, Ricardo Lara SD 33

LOS ANGELES COUNTY



Janice Hahn for County Supervisor District 4, Kathryn Barger for County Supervisor District 5, Javier Perez for Superior Court Judge

STANISLAUS COUNTY



Kristin Olsen for County Supervisor District 1